Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
38ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 15 (1865) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 21, 2018
VOLUME 38, NO. 15 (1864) SATURDAY APRIL 21, 2018
Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի
MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Փշալարերու Երկու Կողմերը

Դարձեալ փշալարեր տեղադրուած են Երեւանի հրապարակներուն վրայ:

Փշալարերու այն կողմը իշխանութիւնն է՝ իր վարչապետով, Խորհրդարանի աթոռները գրաւած օլիկարխներով, պետութեան հաշւոյն օրըստօրէ աւելի հարստացող պետական բարձրաստիճան պաշտօնեաներով:

Փշալարերու այս կողմը կանգնած է Հայաստանի ժողովուրդը: Այն ժողովուրդը, որու մէկ երրորդը կ՚ապրի աղքատութեան եզրին: Այն ժողովուրդը, որ իր միակ փրկութիւնը կը տեսնէ հայրենիքէն հեռանալու եւ ալ ափերու վրայ իր զաւակներու ապագան փնտռելու մէջ: Այն ժողովուրդը, որ քսան տարիներէ ի վեր կը փորձէ ձերբազատուիլ զինք կեղեքող ու նուաստացնող իշխանաւորներէն:

Փշալարերու այն կողմը գտնուողներու ծրագիրները սխալ դուրս եկան, երբ կարծելով թէ սահմանադրութիւն փոխելով, ընտրութիւններ կեղծելով ու խորհրդարանէն ներս մեծամասնութիւն ունենալով, սահուն եւ առանց ցնցումներու կրնան երկարաձգել իրենց քսանամեայ իշխանութիւնը:

Անակնկալի եկան նաեւ փշալարերու այս կողմը գտնուողները, մտածելով թէ ժողովուրդը յոգնած է բողոքելէ, հաշտուած է տիրող իրավիճակին հետ եւ պատրաստ չէ փողոց դուրս գալու եւ հերթական անգամ մատնուելու յուսախաբութեան:

Սակայն, այս անգամ փողոց դուրս եկած է Հայաստանի նոր սերունդը՝ իր ուսանողութեամբ ու երիտասարդութեամբ, դառնալով այս նորագոյն ընդվզումի մղիչ ուժը, տասնեակ հազարներով ողողելով Հանրապետութեան հրապարակը, փակելով մայրաքաղաքի ճանապարհները, կաթուածահար ընելով իրենց սիրած մայրաքաղաքը, ու անոնք այս ծայրայեղ քայլերուն կը դիմեն իրենց Հայրենիքին մէջ արժանապատիւ կեանք ու ապագայ կերտելու վեհ ձգտումով:

Թէ ինչպէս կ՛աւարտի հերթական բողոքի այս ալիքը, դժուար է այժմ կռահել: Ապաւինելով ժողովուրդի նեցուկին, Երիտասարդութիւնը պիտի փորձէ խաղաղ միջոցներով փոփոխութիւններու հասնիլ: Իշխանութիւնը չունի ժողովրդային յենարան, բայց իր զինանոցին մէջ միշտ ունի բռնի միջոցներ կիրարելու կարողութիւնը:

Իշխանութիւններուն կը մնայ եզրակացութիւններ ընել վերացնելու համար ժողովուրդի եւ իր միջեւ գոյութիւն ունեցող իսկական ու փոխաբերական առումներով բազմաթիւ փշալարերը: Եւ այդ որքան շուտ, այդքան լաւ մեր երկրի ու ժողովուրդի համար:

Մինչ այդ, մենք կը մնանք փշալարերու այս կողմը:

«ՄԱՍԻՍ»

# Սերժ Սարգսեան Ընտրուեցաւ Վարչապետ Նիկոլ Փաշինեան Յայտարարեց Յեղափոխական Կոմիտէներ Ստեղծելու Մասին

*Ապրիլ 17-ին Հայաստանի Ազգային ժողովը յատուկ նիստի ընթացքին, 76 կողմ, 17 դէմ ձայներու յարաբերակցութեամբ, իշխող Հանրապետական կուսակցութեան ղեկավար Սերժ Սարգսեանը ընտրուեց Հայաստանի վարչապետ:*

*Սարգսեանի վարչապետութեան կողմ քուէարկեցին, ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն եւ «Ծառուկեան» դաշինքի մէկ մասը:*

*Հայաստանի նոր Սահմանադրութեամբ վարչապետը գործադիր իշխանութեան փաստացի ղեկավարն է:*

*Սերժ Սարգսեանի իշխանավարման շարունակման դէմ պայքարը գլխաւորող՝ ԱԺ «Ելք» խմբակցութեան ղեկավար, «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան առաջնորդ Նիկոլ Փաշինեան, իր աջակիցներուն կոչ ըրած էր շրջափակել խորհրդարանի շէնքը եւ այդպիսով տապալել նիստը, սակայն երբ ընդդիմադիրներու ջանքերը տապալեցան, Փաշինեանը յայտարարեց «ժողովրդական ոչ-բռնի թաւշեայ յեղափոխութեան» մեկնարկի մասին:*

*Փաշինեանի գլխաւորութեամբ հազարաւոր ցուցարարներ արգելափակած էին Գլխաւոր դատախազութեան, Կեդրոնական դրամատան, Վճռաբեկ դատարանի շէնքերը, կառավարութեան նոր մասնաշէնքը, ուր քանի մը նախարարութիւններ տեղակայուած են եւ Պետական եկամուտներու կոմիտէի շէնքը:*



Ցուցարարները գրաւած են Երեւանի կեդրոնական հրապարակը

*Ընդդիմադիրները Երեւանի տարբեր հատուածներու մէջ քաղաքացիական անհնազանդութեան բողոքներ իրականացնեն են, փողոցները փակուած են:*

*Երեկոյեան ժողովուրդը տասնեակ հազարներով լեցուցած է Երեւանի կեդրոնական՝ Հանրապետու-*

Շար.ը էջ 5

## Ժընեւի Մէջ Բացուած է Հայոց Ցեղասպանութեան Զոհերու Յիշատակին Նուիրուած Յուշակոթող


Զուիցերիոյ ՀՀ դեսպան Շառլ Ազնաւուրի մասնակցութեամ յուշակոթողի բացումը Ժընեւի մէջ

*Ժընեւի Թրամբլէյ զբօսայգիի մէջ (Parc Trembley) բացուած է Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակը յաւերժացնող «Յիշատակի Լապտերներ» յուշահամալիրը՝ Զուիցերիոյ ՀՀ դեսպան Շառլ Ազնաւուրի մասնակցութեամբ:*

*Պրոնզաձոյլ տասը մեծր բարձրութեամբ լապտերներէ բաղկացած յուշակոթողը, որ ֆրանսահայ անուանի արուեստագէտ Մելիք Օհանեանի ստեղծագործութիւնն է, Զուիցերիոյ հայ համայնքին նուէրն է Ժընեւ քաղաքին՝ ի նշան Ժընեւցիներու եւ հայերու համատեղ պատմական յիշողութեան:*

*Ժընեւի քաղաքապետարանի կողմէն կազմակերպուած բացման հանդիսաւոր արարողութեանը մասնակցած եւ ելոյթով հանդէս եկած է Ժընեւի քաղաքապետ Ռեմի Պագանին, Ժընեւի 2014-15 թթ. քաղաքապետ, ներկայիս մշակութային հարցերով փոխքաղաքապետ Սամի Կանաանը, Ժընեւի*

Շար.ը էջ 5

## Հայաստանը Մենատիրական Դառնալու Վտանգի Առջեւ Կանգնած է

*Հայաստանը ժողովրդավարութեան առումով զիջած է դիրքերը եւ Եւրասիական տարածաշրջանի շարք մը այլ պետութիւններու նման այսօր կանգնած է մենատիրական դառնալու վտանգի առջեւ, պնդած է Freedom House իրաւապաշտպան կազմակերպութեան հրապարակած զեկոյցը:*

*Ի տարբերութիւն նախորդ զեկոյցներուն, այս անգամ յատուկ ուշադրութեան արժանացած է յատկապէս Սերժ Սարգսեանի իշխանավարութեան հնարաւոր երկարաձգումը:*

*Սերժ Սարգսեանի նախագահութեան տասը տարիները համեմատելով՝ կազմակերպութիւնը փաստած է, որ անոր գահակալութեան շրջանին Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ցուցիչը նուազած է:*

*Ինչպէս եւ նախորդ տարիներուն, այս անգամ ալ Հայաստանը որակուած է կիսամենատիրական պետութիւն, որ կը փորձէ քօղարկել այդ, սահմանափակ յարգանք կը տածէ ժողովրդավարական հաստատութիւններուն եւ նուազագոյն*

Շար.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Արմէն Սարգսեանի՝ Համազգային Առաջնորդ Դառնալու Պատմական Պահը

ԿԱՐԻՆԷ ՍԱՐԻԲԷԳԵԱՆ

*Հետաքրքիր է՝ իսկ որտե՞ղ է Հայաստանի Հանրապետութեան նորընտիր նախագահը: Ճիշդ է, նա սահմանադրութեամբ լուրջ լծակներ չունի եւ չի կարող իրաւապահ մարմիններին որեւէ հրահանգ տալ կամ ինչ-որ պահանջներ դնել, բայց գոնէ խօսելու, իրավիճակը գնահատելու, փողոց դուրս եկած ՀՀ քաղաքացիներին եւ «Իմ քայլը» նախաձեռնութեան լիդերներին որեւէ յորդորով դիմելու իրաւունք նախագահ Արմէն Սարգսեանը վստահաբար ունի: Դրա համար սահմանադրական յատուկ լիազօրութիւններ պէտք չեն՝ նա հանրապետութեան նախագահն է եւ կարող է իր կեցուածքով, համարժէք քայլով եւ խօսքով ստանձնել նաեւ երկրի իրական առաջնորդ դառնալու գործառոյթը: Ի վերջոյ Արմէն Սարգսեանը՝ որպէս ՀՀ նախագահ, Երեւանի կենտրոնում կատարուող իրադարձութիւնների, փողոց դուրս եկած մօտ 10 հազար ՀՀ քաղաքացու պահանջների վերաբերեալ ինչ-որ մօտեցում կամ կարծիք ունի՞, թէ՞ ոչ: Ինչ կարծիք ունի եւրոպական քաղաքական մշակոյթի կրողը համարուող Արմէն Սարգսեանը ոստիկանութեան ցուցաբերած վարքագծի հանդէպ:*

*Հայաստանի քաղաքական եւ քաղաքացիական շարժումների մեծագոյն բացթողումներից մէկը մշտապէս եղել է այն, որ փողոց դուրս եկած Հայաստանի քաղաքացին միշտ մենակ է մնացել իր դէմ կանգնած ոստիկանական հուժկու մեքենայի եւ թիկունքին կանգնած ընդդիմադիր լիդերների հետ: Երրորդ հաշտարար կողմը չի եղել. ո՛չ ամենայն հայոց կաթողիկոսը՝ իբրեւ հոգեւոր առաջնորդ, ո՛չ էլ պետական առաջնորդները երբեք չեն խառնուել հրապարակի իրադարձութիւններին: Չեն խառնուել ու դրանով ազատութիւն են տուել իշխանութեանը՝ անարգել գործի դնելու ոստիկանական ապարատը: Արմէն Սարգսեանը կարող է նոր մշակոյթ մտցնել եւ փոխել խաղի կանոնները ինչպէս իշխանութեան, այնպէս էլ հասարակութեան համար: Սա իսկապէս պատմական պահ է Արմէն Սարգսեանի համար՝ դառնալու իրական առաջնորդ, անելու անհրաժեշտ նուազագոյնը՝ իբրեւ սահմանադրական պահանջ, եւ առաւելագոյնը իբրեւ պետական եւ ազգային գործիչ:*

*Մինչեւ նոր վարչապետի ընտրութիւնը, Արմէն Սարգսեանը լիազօրութիւնները լիովին ստանձնած միակ պետական բարձր պաշտօնեան է: Նա նոր է ընտրուել, եւ այս պահին իր տեղում ուժեղ է: Ըստ այդմ՝ նա ունի ընտրութեան իրաւունք. դառնալ համազգային առաջնորդ կամ մնալ անգլիական թագուհի:*

*«ՀԱՅԵԼԻ»*

# Սերժ Սարգսեանի Առաջին Կոպիտ Սխալը

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*Ապրիլի 17-ին Սերժ Սարգսեանը խորհրդարանում ընտրւում է վարչապետ, եւ Նիկոլ Փաշինեանի ջանքը՝ շրջափակել խորհրդարանն ու խանգարել քուէարկութեանը, այն էլ երկու անգամ, որ յետոյ լինի խորհրդարանի լուծարում եւ արտահերթ ընտրութիւն, չյաջողուեց:*

*Ինչպէս կ՚անդրադառնայ դա հետագայ ընթացքի վրայ, հանրութեան պահուածքի, վերաբերմունքի վրայ: Ինչ են անելու յետոյ, լինելու է ձնագնդի՞, թէ հալոցքի էֆեկտ: Այս կամ այն դէպքում ինչպէս է դա անդրադառնալու իշխանութեան պահուածքի, նաեւ ներքին յարաբերութիւնների վրայ: Որպէս կանոն, այդօրինակ զանգուածային ակցիաները եւ աղմկոտ իրադարձութիւնները անխուսափելիօրէն բերում են իշխանութեան ներսում առկայ յարաբերութիւնների պարզաբանման, տարբեր դիրքերից եւ ելակէտերից, տարբեր շարժառիթներով, ինչն էլ կարող է հանգեցնել նոր կոնֆիգուրացիաների ձեւաւորման:*

*Այդ իմաստով, երբ օրինակ Սերժ Սարգսեանի վարչապետութեան անհրաժեշտութիւնը Կարէն Կարապետեանը բնորոշում էր կոնֆիգուրացիան առայժմ պահելու նպատակայարմարութեամբ, արդեօք Նիկոլ Փաշինեանի ծաւալած շարժումը կը հանգեցնի կոնֆիգուրացիայի շատ թէ քիչ փոփոխութեան կամ դրան տանող գործընթացի արդէն իշխանութեան ներսում:*

*Մի բան երեւի թէ անհերքելի է. Սերժ Սարգսեանի առաջին եւ ամենակոպիտ սխալը կը լինի համարելը, թէ Հայաստանում ընդդիմութիւնը այս կամ այն կոնֆիգուրացիայով կարողանում է փողոց հանել առաւելագոյնը մի քանի հազար մարդ, ինչն իշխանութեան համար անելանելի վիճակ չէ:*

*Ընդդիմութեանը Հայաստանում վաղուց չի յաջողուել, ու թերեւս երբեք չի յաջողուել փողոց հանել 100 հազար մարդ, եւ այդ իմաստով թուերի հետ պէտք է լինել շատ զգոյշ, սակայն միւս կողմից իշխանութեանն է պէտք շատ զգոյշ լինել, համարելուց, թէ ընդդիմութիւնը չունի այդպիսի աջակցութիւն կամ հաւանութիւն հրապարակում, հետեւաբար կարելի է հանգիստ լինել իշխանական աշխատասենեակներում:*

*Ընդդիմութիւնը հարիւր հազար կամ հազարներ չի հաւաքում, իսկ իշխանութիւնն ընտրութեանը գնում է հարիւր հազարներ, բայց գործնականում իրականութիւնն այն է, որ հարիւր հազար մարդիկ ունեն խիստ դժգոհութիւն ներկայիս կառավարման որակից ու արդիւնքից, եւ նաեւ Սերժ Սարգսեանից:*

*Սերժ Սարգսեանը նախագահութեան տասնամեակի ընթացքում հարիւր հազարների հաւաքել է «մտքերում», ու ընդ որում իր դէմ՝ իր գործունէութիւնից դժգոհութեան տեսքով:*

*Սարգսեանի կառավարման անարդիւնաւէտութեան հարցում գուցէ շատ իրողութիւններ յարաբերական ու հակասական են, արտաքին իսկապէս լրջագոյն մարտահրաւէրների պարբերականութեան, արտաքին անբարենպաստ միջավայրի, նաեւ ներքին վատ ժառանգութեան առումով: Սակայն խնդիրը տուեալ դէպքում բացարձակապէս այլ դաշտում է՝ սեփական քայլերում հանրութեան համար վստահելի, համոզիչ, ընդունելի չլինելու դաշտում:*

*Սարգսեանն էլ անկասկած լաւ է պատկերացնում այդ ամէնը, առայժմ սակայն լուծումը գտնելով իրավիճակային դաշտում, որը գուցէ չէզոքացնում է հարիւր հազարների դժգոհութեան այսպէս ասած տրանսլյատորներին, բայց ամենեւին ոչ դժգոհութիւնը: Իսկ այդ դժգոհութիւնը, չունենալով տնտեսա-քաղաքական հեռահաղորդակցութեան արդիւնաւէտ ենթակառուցուածքներ, քայքայում է պետութիւնը:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# Նրանք Արդէն Յաղթել Են

ԱՐՄԻՆԷ ՕՀԱՆԵԱՆ

*Անգամ Նիկոլ Փաշինեանի «ընդդիմութիւնը» չի կարող չխոստովանել, որ պայքարի մարտավարութիւնն ու ռազմավարութիւնն այս անգամ ոչ միայն բաւականին կրեատիւ են, այլեւ արդիւնաւէտ՝ իր նախանշած նպատակներին հասնելու առումով: Սա արդէն կանաչ «Ջորի» հրել չէ, ակցիաներ են, որոնք մեծ թիւով մարդկանց մասնակցութիւն չեն պահանջում: Ոչ մեծ խմբերով կամ 1-2 աւտոմեքենայով կարելի է փողոցներ ու կամուրջներ փակել, մետրոյի աշխատանքը կաթուածահար անել եւ մարդկանց իջեցնելով տրանսպորտից՝ ներգրաւել բողոքի ակցիաներին: Դէպի բուհեր քայլերթը եւս արդիւնաւէտ է՝ ուսանողներին ակտիւացնելը, պայքարի մէջ ներգրաւելը է՛ւ ագնուացնում է գործընթացը, է՛ւ էֆեկտիւ դարձնում այն:*

*Ձեռքերը բարձրացրած առաջ շարժուելու, ոստիկանական պատերը ճեղքելու փորձը եւս իրենց արդարացնում են՝ անզէն ու ձեռքերը վեր պարզած մարդու վրայ անգամ գիշատիչները չեն յարձակւում, ուր մնաց՝ հայազգի ոստիկանները: Իսկ կարգախօսն ընդհանրապէս գտնուած տեքստ է՝ կրեատիւ, վարակիչ, ռեպի նմանուող: Այն արդէն շատ պայքարողների հեռախօսների վրայ է տեղադրուել՝ ինչպէս Տէր-Պետրոսեանի ժամանակ էին անում: Հրապարակում վրաններ խփելն ու երգելպարելն էլ թէեւ նոր չեն՝ նախկինում փորձարկուած մեթոդներ են, բայց կրկին աշխատող:*

*Մի խօսքով՝ Նիկոլ Փաշինեանը յեղափոխութեան գործիչ է, բարիկադների վրայ բարձրացած «Գավրոշ», որի խզուած ձայնը, ծեծուած դէմքը, բինտով փաթաթուած ձեռքն ու 20 օրուայ մօրուքը յեղափոխականին խիստ բնորոշ իմիջ են ձեւաւորում եւ ստիպում մարդկանց հաւատալ իրեն ու իր յայտարարած նպատակներին:*

*Այսօր բարդ օր է լինելու յեղափոխականների համար: Նրանց պայքարը կարող է արդիւնք չտալ՝ Սերժ Սարգսեանի առաջադրումը կանխելու իմաստով: Բայց այս ոգեւորութիւնն ու պայքարն ինքնին արդէն յաջողութիւն կարելի է համարել:*

*«ՀՐԱՊԱՐԱԿ»*

**Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը**

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՕՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## «Ինչի էք Մնացել Այդ Առանձնատանը, Գնացէք, Որ Այլ Վարչապետ Գայ» Արամ Սարգսեան



Արամ Սարգսեան ելոյթ կ'ունենայ Խորհրդարանի նիստին

Ազգային Ժողովի նիստին, յատկացուած ՀՀ վարչապետի պաշտօնին Սերժ Սարգսեանի ընտրութեան հարցի քննարկման, «Ելք» խմբակցութեան պատգամաւոր Արամ Սարգսեանն իր ելոյթի ընթացքին յայտարարեց.

«Նախ անդրադառնամ եղբօրս խօսքերին, որ մէջբերեց պարոն Շարմազանովը՝ Սերժ Սարգսեանի մասին. իմ եղբայրը շատ ուրիշ ու կարեւոր բաներ էլ է ասել ՀՀԿ մասին, օրինակ՝ 21-րդ դարը մերն է լինելու կոչը: Արդեօ՞ք այն ՀՀ-ն, ինչ կայ այսօր՝ Վազգէն Սարգսեանի պատկերացրած ՀՀ-ն է: 1996թ յետոյ եղբայրս հետեւութիւններ արեց. 1998թ. Կարէն Դեմիրճեանին խնդրեց, որ դաշինք կնքի, որ ժողովրդի վստահութիւնը վայելի: Ասում են՝ կաշառք չենք բաժանել, է, ասէք, դրանից բան չի փոխուելու:

Ձեր ասած՝ գաղջ մթնոլորտը յաղթահարե՞լ էք, անվտանգութեան պատերը քանդե՞լ էք, որ այս շէնքի մօտ են դրուած: Ելքը ոչ միայն այս դահլիճում է, այլեւ դրսում է: Այսքան տարի իշխանութեան մէջ էք, ինչ էք արել, որ այն փոխանցէք երիտասարդներին: Այնքան էք դատարկել պահեստաւորների նստարանը, որ Սերժ Սարգսեանի փոխարինողը միայն Սերժ Սարգսեանն է:

Արդէն դեժավիւ է, չէ՞ք յոգնել: Ղեկավարութեան 3-րդ ժամկէտ էք գնում, քանի որ ԵՏՄ ձեր ոչ մի գործընկեր չի փոխւում ու դրա համար չէք ուզում նրանցից հետ մնաք: Ինչի էք մնացել այդ առանձնատանը, գնացէք, որ այլ վարչապետ գայ: Այն, ինչ տեղի է ունենում հիմա փողոցներում, դա բոլորիս մեղքն է, սակայն իսկապէս ելք կայ: Եթէ հետեւութիւն չանենք, ապա մարտի մէկեր ու ապրիլի 12-եր էլի են կրկնուելու՞:

## Նախագահ Սարգսեան Արձագանգած Է Փողոցի Մէջ Տեղի Ունեցող Իրադարձութիւններուն

Երեւանի փողոցներու մէջ արդէն 5-րդ օրը տեղի ունեցող փողոցային պայքարին վերջապէս արձագանգած է Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանը՝ շեշտելով որ, պէտք է բացառուի բռնութիւնը:

Պատասխանելով «Ազատութեան», թէ ինչպէս նախագահ Արմէն Սարգսեանը կը գնահատէ փողոցի մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները, ինչպէս նաեւ ոստիկանութեան կողմէ ցուցարարներու նկատմամբ յատուկ միջոցներու օգտագործումը, որու հետեւանքով կան բազմաթիւ վիրաւորներ, Արմէն Սարգսեանը ընդգծած է՝ «ազատ կամարտայայտութեան ընթացքում պէտք է բացառուի բռնութիւնը, անօրինական գործողութիւնները եւ այլոց իրաւունքների սահմանափակումը»:

Հայաստանի նախագահը, սակայն, ճշգրիտ գնահատական ոստիկանութեան գործողութիւններուն չէ տուած: Ան շեշտած է. - «Ցանկացած քաղաքական ուժի կամ քաղաքացու իրաւունքն է նաեւ Սահմանադրութեամբ իրենց վերապահուած իրաւունքների շրջանակում՝ լինի դա հաւաքի, ցոյցի եւ այլ խաղաղ միջոցներով, ազատօրէն արտայայտել իրենց կարծիքը, համաձայնութիւնը կամ անհամաձայնութիւնը քաղաքական այս կամ այն իրադարձութեան նկատմամբ: Ազատ խօսքի եւ կամարտայայտութեան իրաւունքը ժողովրդավարութեան կարեւորագոյն արժէքներից է: Հայաստանի Հանրապետութեան իւրաքանչիւր քաղաքացու կարծիքը կարեւոր է երկրի համար»:

Արմէն Սարգսեանը ընդգծած է, որ Հայաստանի անվտանգութիւնը եւ ազգային համերաշխութիւնը բոլորի համար պէտք է լինեն առաջնային ու անքննելի անհրաժեշտութիւն:

«Ուզում եմ ընդգծել, որ Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացու առողջութիւնը եւ կեանքը՝ ուսանողից, ցուցարարից մինչեւ ոստիկան, թանկ է բոլորիս համար», - ըսուած է «Ազատութեան» հարցին ի պատասխան Արմէն Սարգսեանի յայտարարութեան մէջ:

## Նաիրա Զոհրապեան Դժգոհ Է «Ծառուկեան» Խմբակցութեան Իր Ընկերներէն

Tert.am-ի հետ զրոյցին Ազգային ժողովի «Ծառուկեան» խմբակցութեան պատգամաւոր Նաիրա Զոհրապեանը անդրադարձած է «Ծառուկեան» խմբակցութեան քուէարկութեանը եւ հարցին, թէ ասկէ ետք արդեօք իրենք կրնան կոչուիլ ընդդիմութիւն, նաեւ այն հարցին, թէ ինչու բացակայած է դաշինքի ղեկավար Գագիկ Ծառուկեանը:

Հարցին թէ 31 հոգիներէ բաղկացած «Ծառուկեան» խմբակցութիւնէն 12 հոգի կողմ քուէարկեց Սերժ Սարգսեանի թեկնածութեանը, մի քանին ալ բացակայ էին: Ասկէ ետք խմբակցութիւնը կրնայ շարունակուել ընդդիմութիւն կոչուիլ, Զոհրապեան պատ-ասխանած է.

«Կարծում եմ, որ այս հարցը պիտի ուղղէք իմ յարգարժան այն գործընկերներին, որոնք կողմ քուէարկել են: Ես կը մնամ իմ վստահ համոզմանը, որ ներկայացրել եմ ներկուսակցական քննարկումների ժամանակ, որ ընդդիմադիր խմբակցութիւնը չի կարող եւ չպէտք է պաշտպանի քաղաքական մեծամասնութեան ծրագիրը, որն այսօր ներկայացրեց Սերժ Սարգսեանը՝ քանիցս շեշտելով, որ ինքը ներկայացնում եւ իրականացնելու է քաղաքական մեծամասնութեան ծրագիրը: Բացառապէս Հանրապետական կուսակցութեան ծրագիրն է, բայց մեր քննարկումներու ժամանակ եղել են նաեւ պատգամաւորներ, որոնք պաշտպանել են կողմ տեսակէտը, եւ ինչպէս արդէն գիտէք՝ որոշում կայացուեց խմբակցութիւնում քուէարկութիւնը թողնել ազատ: Մնացած հարցերով դիմէ՛ք այն պատգամաւորներին, ովքեր քուէարկել են կողմ: Ես քուէարկել եմ դէմ եւ կարող եմ հիմնաւորել, թէ ինչու եմ դէմ քուէարկել, այն է՝ խորհրդարանական ընդդիմութեան ներկայացուցիչը չի կարող քաղաքական մեծամասնութեան ծրագրին կողմ քուէարկել: Սա ինձ համար պարզ աքսիոմ (ճշմարտութիւն) է: Սա անձերի քուէարկութիւն չէր, եւ բոլոր նրանք, ովքեր փորձել են քուէարկութիւնը անձնաւորել, կարծում եմ, որ քաղաքական մեծ սխալ են գործել»:

## «Այսպէս Կարելի Չէ Առաջ Շարժուել, Երկիրը Ճահիճի Մէջ Է», Ըսաւ Մարուքեան



äատգամաւոր Էդմոն Մարուքեան ելոյթ կ'ունենայ Խորհրդարանի նիստին

«Ես շատ եմ քննադատել այս բարեփոխումները, բայց պարզուեց, որ այս բարեփոխումները մի լաւ ու հետաքրքիր կէտ ունեն՝ առաջին անգամ վեց տարուայ մէջ, որ ես ԱԺ պատգամաւոր եմ, վերջապէս այստեղ է Սերժ Սարգսեանը, կարող ենք նրան հարցեր տալ»,- ըսաւ ԱԺ պատգամաւոր Էդմոն Մարուքեանը:

Ան նշեց, որ մինչեւ հիմա, ով որ եկած է խորհրդարան, անոնք կապ չեն ունեցած ոչ մէկ բանի հետ: «Մենք այնպիսի պետական կառավարման համակարգ ունենք, որ ում ինչ ասում ենք, ձեր նկարն է ցոյց տալիս, պարոն Սարգսեան, ասում է՝ իրեն դիմէք: Սա է էս երկրի կառավարման համակարգը»,- ըսաւ ան: Մարուքեանը Սերժ Սարգսեանին յորդորեց այլեւս բարեփոխում չընել, քանի որ ինչքան ան բարեփոխում ընէ, այնքան երկիրը ետքայլ կ'ապրի: «Մենք զարմանում ենք, էդ մարդկանց դուք որտեղի՞ց էք գտնում: Ձեր հանրային հեռուստաընկերութեան տնօրէնը գալիս է այստեղ, ոչ հայերէն է խօսում, ոչ ռուսերէն, մենք չգիտենք՝ էդ մարդը մեզնից ինչ է ուզում: Ձեր առողջապահութեան նախարարը ամէն օր մտածում է, որ ինչ անի, որ մարդկանց համար վատ լինի, նա ձեզ զեկուցե՞լ է այդ մասին: Ձեր տրանսպորտի նախարարը մտածում է, թէ երկրի ամենալուրջ խնդիրը աջ ղեկն է: Որտեղի՞ց էք դուք գտնում այդ մարդկանց»,- հարցադրում ըրաւ Մարուքեանը:

Ան անդրադարձաւ Հիւսիս-հարաւ մայրուղիի կառուցմանը՝ յայտնելով, որ ատոր հաշուին նախարարը հարստացաւ, բայց ճանապարհը չկայ: «Պրոբլեմը նրանում է, պարոն Սարգսեան, որ դուք ոչ մի բան չէք փոխելու: Բոլորը մտածում են, որ ձեր նպատակն է պահել համակարգն ու այս մարդկանց: Միակ մարդը, ով վերջին փոփոխութիւններից տուժել է, Գալուստ Գրիգորիչն է: Ոչ մի ուրիշ բան դուք չէք փոխել: Ես վստահ եմ, որ եթէ դուք դառնաք վարչապետ, Էդիկ Նալբանդեանին նշանակելու էք արտաքին գործերի նախարար: Էդ մարդը երկրի արտաքին քաղաքականութիւնը ձախողել ա: Ես վստահ եմ, որ դուք նշանակելու էք նոյն առողջապահութեան նախարարին, տրանսպորտի նախարարին: Մարդիկ ասում են՝ վարկը վերցրել է, տուն է սարքել, չգիտեմ ինչ է արել, բայց նաեւ մենք մտածում էինք, որ ճանապարհը պէտք է սարքի: Հիմա վարկը չկայ, տները կան, սաղ հարուստ են ու երջանիկ, բայց ճանապարհը չկայ»,- ըսաւ Մարուքեանը:

Ան յայտարարեց, որ այսպէս կարելի չէ յառաջ շարժուել, այս փակուղի է, երկիրը ճահճի մէջ է: «Եւ մենք եկել ենք ձեզ ասենք, պարոն Սարգսեան, որ մենք դէմ ենք ձեր պաշտօնավարման երրորդ ժամանակաշրջանին: Մենք ուզում ենք առաջին անգամ օգտուել այս հնարաւորութիւնից ու ձեզ ասել, թէ ինչ է երկրում կատարւում: Իմ տպաւորութեամբ կայ երկու աշխարհ՝ ձեր եւ մեր աշխարհը: Ձեր աշխարհում մարդիկ ձեզ չեն ասում, թէ ինչ է տեղի ունենում երկրում: Կամ չեն ասում, կամ էլ ասում են, բայց դուք փոփոխութիւններ չէք կատարում»,- աւելցուց ան:

Ըստ Մարուքեանի՝ այս կեղծ կառավարման եւ խորհրդարանական համակարգ է:

ԼՈՒՐԵՐ

## «Սերժ Սարգսեանի Նշանակումը Վարչապետի Պաշտօնին Կասկածի Տակ Կը Դնէ Ժողովրդավարութեան Կայունութիւնը»

Human Rights Watch իրաւապաշտպան կազմակերպութիւնը Հայաստանի իշխանութիւններուն կոչ ըրած է զերծ մնալ ցուցարարներու դէմ բռնի ուժի գործադրումէն:

Փաստելով, որ վերջին քանի մը տարիներու ընթացքին ոստիկանութիւնը Երեւանի մէջ բազմիցս բռնի ուժ գործադրած է՝ հիմնականին խաղաղ հանրահաւաքները ցրելու համար, հեղինակաւոր իրաւապաշտպան կառոյցը ընդգծած է, որ Հայաստանի իշխանութիւնները պէտք է պաշտպանեն իրենց քաղաքացիներու՝ խաղաղ հաւաքներ իրականացնելու իրաւունքը:

«Ոստիկանութեան ցանկացած արձագանգ պէտք է ըլլայ համաչափ եւ համապատասխանի ՄԱԿ-ի չափանիշներուն»,- յայտարարած է Human Rights Watch-ը, աւելցնելով. «Հայաստանի ոստիկանութեան համար երբեք ուշ չէ, որպէսզի հրաժարի անհամաչափ ուժ կիրառելու՝ իրենց աւանդական վատ գործելաոճէն»:

Գերմանական «Տոյչէ Վէլլէ»-ն յիշեցուցած է՝ Սերժ Սարգսեանը իշխանութեան գլուխ անցաւ 2008 թուականին՝ յաղթելով նախագահական ընտրութիւնները, որոնք զանգուածային բողոքի ցոյցերու ու սպանութիւններով ուղեկցուած բախումներու պատճառ դարձան: Փորձագէտները նշած են, որ նախագահութենէն յետոյ վարչապետի պաշտօնը ստանձնելու՝ անոր քայլը ծանօթ է ու յաճախ կիրառուած է նախկին ԽՍՀՄ երկիրներու մէջ: «Այդ յայտնի մարտավարութիւն է յետխորհրդային տարածքին մէջ, ուր առաջնորդները անընդհատ կը փոխեն Սահմանադրութիւնը՝ իրենց իշխանութիւնը յաւերժացնելու համար»,- ըսած է «Քարնեգի Եւրոպա» փորձագիտական կեդրոնի առաջատար փորձագէտ Թոմաս տէ Վաալը:

Աշխարհաքաղաքական վտանգներու միջազգային վերլուծական կեդրոնը՝ Foreign Brief-ը պնդած է՝ Սերժ Սարգսիանի նշանակումը վարչապետի պաշտօնին կասկածի տակ կը դնէ Հայաստանի ժողովրդավարութեան կայունութիւնը: Միջազգային վերլուծական կեդրոնը նաեւ փաստած է, որ անկախացումէն ետք մինչ օրս ղարաբաղեան հարցն ու երերուն տնտեսութիւնը փորձութեան կ'ենթարկեն Հայաստանի ներքին կայունութիւնը: «Այս ամէնուն գլուխը փտած քաղաքական համակարգն է, որ 2015-ին գնաց սահմանադրական փոփոխութիւններու՝ կեդրոնացնելով իշխանութիւնը վարչապետի ձեռքին»,- աւելցուցած է Foreign Brief-ը:

«Հաշուի առնելով Սերժ Սրագսեանի կապերը Մոսկուայի հետ՝ անոր ընտրութեամբ Ռուսաստանի ազդեցութիւնը Հայաստանի վրայ կը պահպանուի»,- պնդած են միջազգային փորձագէտները, աւելցնելով՝ Սերժ Սարգսեանի իշխանավարման դէմ ցոյցերը, ամենայն հաւանականութեամբ, կը շարունակուին, եւ բացառութիւն չէ, որ բռնութիւններ գործադրուին:

## ԵԱՀԿ Դիտորդներ. «Ատրպէյճանի Մէջ Ազատ եւ Արդար Ընտրութիւններու Իրականացումը Անհնար Է»

«Ատրպէյճանի տիրող քաղաքական միջավայրի մէջ ազատ եւ արդար ընտրութիւններու իրականացումը անհնար է»: Պաքուի մէջ կայացած մամուլի ասուլիսի ժամանակ նման յայտարարութեամբ հանդէս եկած են Ապրիլ 11-ի նախագահական ընտրութիւններու գործընթացին հետեւող միջազգային դիտորդները:

«Ատրպէյճանի մէջ արտահերթ նախագահական ընտրութիւնները կայացած են սահմանափակումներով աչքի զարնող քաղաքական միջավայրի մէջ եւ այնպիսի օրէնքներու առկայութեամբ, որոնք կը կրճատեն մարդու հիմնարար ազատութիւններն ու իրաւունքները»,- նշուած է ԵԱՀԿ դիտորդներու տարածած յայտարարութեան մէջ:

Իշխանամէտ լրագրողները դիտորդներու ասուլիսը ընդհատած են՝ զանոնք մեղադրելով, որպէս հայերու շահերը սպասարկելու, զեկոյցի մէջ իրականութեան չհամապատասխանող տեղեկութիւններ տարածելու համար, ապա պահանջած փոփոխութեան ենթարկել ողջ փաստաթուղթը: ԵԱՀԿ դիտորդները ստիպուած 20 վայրկեանով ընդհատած են զեկոյցի հրապարկումը:

Ատրպէյճանի Կեդրոնական ընտրական յանձնաժողովը, սակայն, պնդած է, որ Ապրիլ 11-ի քուէարկութիւնը համապատասխանած է բոլոր միջազգային չափանիշներուն: Անոնց համաձայն՝ Իլհամ Ալիեւի օգտին քուէարկած է ընտրութիւններուն մասնակցած Ատրպէյճանի քաղաքացիներու 86 տոկոսը: Առաջադրուած թեկնածուները աննշան թիւով քուէներ ստացած են, առաւելագոյնը՝ 3,5 տոկոս: ԿԸՀ նախագահ Մազահիր Փանահովի յայտարարութենէն անմիջապէս ետք ատրպէյճանական ալիքները հեռարձակած են Իլհամ Ալիեւի հետեւեալ ուղերձը:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## Կարօ Փայլանի Դէմ Դատական Հարց Ան Կրնայ Զրկուիլ Պատգամաւորի Իրաւունքներէ



Թուրքիոյ խորհրդարանի անդամ Կարօ Փայլան

Անգարայի հանրապետական դատախազութիւնը քրտամէտ Ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան 8 պատգամաւորի նկատմամբ իրաւական գործընթաց սկսելու նպատակով պահանջագիր պատրաստած է: Պատգամաւորներուն մէջ է նաեւ Կարօ Փայլանը:

Կարօ Փայլանէն բացի, պահանջագրին մէջ ներառուած են պատգամաւորներ՝ Օսման Պայդեմիրի, Ալիջան Օնլուի, Ֆելեքնաս Ուջայի, Սիպել Յիղիթալփի, Նատիր Ելդըրըմի, Տիլէք Օջալանի, Միզգին Ըրգաթի անունները: Անոնք կը մեղադրուին «Թուրք ազգը, Թուրքիոյ Հանրապետութիւնը, կառավարութիւնը, պետութեան զինուորը կամ անվտանգութեան համակարգը հրապարակայնօրէն ծաղրելու», «ահաբեկչական խմբաւորման քարոզչութիւն ընելու», «քաղաքական կուսակցութիւններու կանոններուն հակառակ գործելու», «հանրապետութեան նախագահին վիրաւորելու» մէջ:

Կարօ Փայլանի դէմ նախապատրաստուած պահանջագրին մէջ, մասնաւորապէս, կը նշուի, որ ան 2017 թուականի Մայիս 1-ին Գանատայի մէջ տուած հարցազրոյցի ընթացքին իր արտայայտած մտքերով «հրապարակայնօրէն ծաղրած է Թրքական ազգը, Թուրքիոյ Հանրապետութիւնը եւ կառավարութիւնը» ու «վիրաւորած հանրապետութեան նախագահը»:

Պահանջագիրներով, համաձայն երկրի սահմանադրութեան 83-րդ յօդուածի, կը նախատեսուի պատգամաւորները զրկել անձեռնմխելիութենէ: Ատոնք խորհրդարանի նախագահութեան ներկայացուելու նպատակով ուղարկուած են Թուրքիոյ արդարադատութեան նախարարութեան:

Թուրքիոյ խորհրդարանի նախագահութիւն ներկայացուելէ ետք՝ հարցը քննարկման կը դրուի յատուկ յանձնաժողովի մէջ, որու կազմին մէջ են խորհրդարանի սահմանադրական եւ արդարադատութեան հարցերով յանձնաժողովներու անդամները: Յանձնաժողովը հարցը ուսումնասիրելէ ետք կը պատրաստէ համապատասխան զեկոյց, որ վերջնական քուէարկութեան կը դրուի խորհրդարանի նիստի ժամանակ:

Պատգամաւորները իրաւունք ունին ինչպէս յանձնաժողովի, այնպէս ալ խորհրդարանի նիստի ժամանակ հանդէս գալ պաշտպանական խօսքով: Անձեռնմխելիութենէ զրկուելու պարագային անոնք կրնան հարցը բողոքարկել Սահմանադրական դատարանի մէջ:

## Թուրքիայէն Արտագաղթողներուն Մէջ Մեծ Թիւ Կը Կազմեն Պոլսահայերը

Գերմանաբնակ թուրք ուսումնասիրող Ալի Սայիթ Ըլքըն անդրադարձած է վերջին տարիներուն Թուրքիայէն դէպի Արեւմուտք կատարուող արտագաղթին ու պատճառներուն, վերջինս փորձած է դասակարգել Թրքական հասարակութեան այն խումբերը, որոնք կը ձգտին լքել երկիրը այս շրջանին:

Թրքական gazeteduvar.com.tr կայքի մէջ տեղ գտած իր յօդուածին մէջ հեղինակը խօսած է նաեւ Թուրքիոյ հայ համայնքի մասին, որ վերջին տարիներուն նոյնպէս կը ձգտի բռնել Եւրոպայի ճամբան:

«Թուրքիոյ մէջ, որպէս կրօնական փոքրամասնութիւն, առաւել շատ աչքի կը զարնեն հայերը, յոյներն ու հրեաները: Կը նկատուի, որ այս համայնքներուն մէջ արտագաղթը աւելի սաստկացած է, յատկապէս 2013 թուականին, Կեզի զբօսայգիի ցոյցերէն ետք: Երկիրը լքելու հիմնական դրդապատճառները նոյնն են, ինչ որ նաեւ այլ քաղաքացիներու պարագային: Այս մարդիկ հիմնականին կ'արտագաղթեն Ֆրանսայի եւ Սպանիոյ պէս երկիրներ», - նշած է թուրք ուսումնասիրողը:

Թուրքիոյ արտագաղթող քաղաքացիներու շարքին են նաեւ թուրք միլիոնատէրները, ընդդիմադիր հայեացքներու պատճառով գործազուրկ դարձած գիտնականները, ինչպէս նաեւ թուրք կրօնական քարոզիչ Ֆեթուլլահ Կիւլէնի հետեւորդները, որոնք ռազմական յեղաշրջման փորձի մէջ մեղադրուելէ ի վեր երկրի իշխանութիւններու թիւ մէկ թիրախը դարձած են:

## 1 Միլիոն Տպաքանակով «National Geographic Traveler China» Պարբերականը Հայաստանի Մասին Նիւթ Հրապարակած Է

Հայաստանի զբօսաշրջային ուղղութեան մասին չինարէնով լայնածաւալ հրապարակում զետեղուած է «National Geographic Traveler China» պարբերականի մէջ, որու ընդհանուր տպաքանակը 1 միլիոն է: «Արմէնպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին ֆէյսպուքեան (facebook) իր էջին վրայ գրառում կատարած է օգտատէր Սոնա Սահակեանը, որու հրաւէրով Հայաստան ժամանած է պարբերականի գլխաւոր խմբագիրը:

«Ես շատ հպարտ եմ տարածելու առաջին յօդուածը Հայաստանի՝ որպէս զբօսաշրջային ուղղութեան մասին «National Geographic Traveler China»-ի մէջ: Եւ սա միայն սկիզբն է», գրած է Սոնա Սահակեանը:

## Նիկոլ Փաշինեան Յայտարարեց

Շարունակուած էջ 1-էն

*թեան հրապարակը:*

*Հսկայ բազմութեան առջեւ ելոյթ ունենալով Փաշինեան յայտարարեց, թէ յաջորդ օրը պէտք է շարունակել շրջափակել գերատեսչական շէնքերը, փողոցները, մայրուղիները:*

*բոլոր բնակավայրերում ու մարզերում: Շատ չուտով ՀՀ բոլոր գերատեսչութիւնները, այդ թւում՝ ոստիկանութիւնը պէտք է կատարեն ոչ թէ Սերժ Սարգսեանի, այլ յեղափոխական կոմիտէների հրամանները», ըսաւ ան:*

*«Սերժ Թանկեան, այս հրապարակը կանգնած է եւ դու պար-*



Փշալարերու Երկու Կողմերը

*«Վաղը ժամը 10-ին ես ձեզ սպասելու եմ Ֆրանսիայի հրապարակում, որտեղից կը սկսուեն մեր գործողութիւնները եւ կ'եզրափակուեն Հանրապետութեան հրապարակում», ըսաւ Փաշինեան:*

*«Առաջիկայ օրերին կը ձեւաւորենք ժողովրդական թաւշեայ յեղափոխութեան կոմիտէներ, որը կը ղեկավարի այս շարժումը եւ կը հասցնի յաղթական աւարտին: Յեղափոխական կոմիտէներ կը ստեղծուեն հանրապետութեան տաւոր ես գալ ու կանգնել ժողովրդի թիկունքին: Սիրելի Արսինէ, վեր կաց արի Երեւան, նամակ գրելու կարիք չկայ, բաժանորդն անհասանելի է: Ես դիմում եմ Շարլ Ազնաւուրին, ով նոյնպէս այն սակաւ մարդկանցից է, որ այսպիսին է դարձրել Հանրապետութեան հրապարակը: Ձեր ներկայութիւնն անհրաժեշտ է, որ մաֆիայի վերջը տանք առանց մի կաթիլ արեան», խօսքը ուղղելով սփիւռքահայ արուեստագէտներուն ըսաւ Փաշինեան:*

## Մենատիրութեան Վտանգի Առջեւ

Շարունակուած էջ 1-էն

*չափով իսկ չի համապատասխանիր ընտրութիւններու վրայ հիմնուած ժողովրդավարութեան չափանիշներուն:*

*Վերլուծելով անցած տարուայ զարգացումները, հեղինակաւոր կազմակերպութիւնը նշած է որ, Հայաստանը յառաջընթաց չէ արձանագրած ոչ թափանցիկ ընտրութիւններու, ոչ արդարադատութեան, ոչ մամուլի ազատութեան, ոչ ալ մարդու իրաւունքներու պաշտպանութեան առնչութեամբ. Ճիշդ հակառակը՝ նախորդ տարուայ համեմատ ա՛լ աւելի վատացած է պայքարը կաշառակերութեան դէմ, ընդ որում, գնահատականը կատարուած է՝ հաշուի առնելով ոչ միայն հանրութեան ընկալումը, այլեւ՝ իշխանութեան վերին օղակներու ունեցած առեւտրական շահերը:*

*Ամենավատ արդիւնքը արձանագրուած է ժողովրդավարական կառավարման ու ընտրական գործընթացներու ոլորտներու մէջ, ըստ ուսումնասիրութեան՝ Հայաստանի մէջ կառավարման համակարգի կայունութիւնը եւ անկախութիւնը, օրէնսդիր ու գործադիր մարմիններու հաւասարակշռութիւնը 2008 թուականէն ի վեր շարունակաբար նուազած է: Վերջին տասնամեակին տարեցտարի նուազած է նաեւ ընտրական գործընթացներուն ու բազմակուսակցական համակարգի կայացման համար տրուած գնահատականը: Ամենաբարւօք վիճակը արձանագրուած է քաղաքացիական հասարակութեան բնագաւառի մէջ, սակայն այստեղ ալ 2008 թուականէն ետք վիճակը ոչ թէ բարելաւուած, այլ վատացած է:*

*Որպէս արդիւնք, յետխորհրդային երկիրներու շարքին Հայաստանը այսօր ժողովրդավարութեան ցուցանիշով նկատելի ձեւով զիջած է Վրաստանին, Ուքրանիոյ, Մոլտովային, որոնք կը համարուին անցումային պետութիւններ:*

*Արեւելեան Եւրոպայի, Պալքաններու եւ յետխորհրդային 29 երկիրներու շարքին Հայաստանէն աւելի վատ արդիւնք արձանագրած են Ատրպէյճանը, Պելառուսը, Ռուսիան ու Կեդրոնական Ասիոյ հինգ պետութիւնները:*

*Freedom House-ը Միացեալ Նահանգներու մէջ հիմնադրուած ոչ-կառավարական, անկախ կազմակերպութիւն է, որ աւելի քան 75 տարի աշխարհով մէկ պայքարած է յանուն մարդու իրաւունքներու պաշտպանութեան ու ժողովրդավարութեան կայացման: Կազմակերպութեան գնահատականները մեծ վստահութիւն կը վայելեն Արեւմուտքի մէջ, անոնց հիման վրայ, օրինակ, ամերիկեան «Հազարամեակի մարտահրաւէրներ» միութիւնը կ'որոշէ նիւթական օժանդակութիւն տրամադրել կարիքաւոր, բայց՝ ժողովրդավարութեան ու օրէնքի գերիշխանութեան հաւատարիմ երկիրներուն:*

www.massispost.com

## Ժընեւի Մէջ Բացուած է Յուշակոթող



Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակը յաւերժացնող յուշակոթողը Երեւանի մէջ

Շարունակուած էջ 1-էն

*Հանրապետութեան եւ կանտոնի պետական խորհրդի անդամ Անթոնիօ Օճերսը: Վերջիններս ընդգծած են Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակը յաւերժացնող յուշակոթողի կարեւոր նշանակութիւնը հաւաքական բռնութիւններու դէմ մղուող պայքարին՝ յարգանքի տուրք մատուցելով խոցուած ժողովուրդներու իրաւունքներուն եւ չսպիացած յիշողութիւններուն:*

*Զուիցերիոյ հայ համայնքի՝ յուշարձանի կառուցման համակարգող յանձնախումբի համանախագահներ Վահէ Գաբրաշը եւ Ստեֆան Կրիստեանսընը, ինչպէս նաեւ Ժամանակակից արուեստի քաղաքային հիմնադրամի տնօրէն Միշել Ֆրեյբուրգհաուսն իրենց ելոյթներու ընթացքին անդրադարձած են յուշարձանի նշանակութեան, կառուցման նախապատմութեան՝ յիշեցնելով, որ շուրջ ութ տարի կառուցման թոյլտուութեան սպասող «Յիշատակի լապտերները», ժամանակաւորապէս հանգրուանելով Սուրբ Ղազարի՝ Վենետիկի ժամանակակից արուեստի փառատօնին, արժանացած էին վերջինիս Ոսկեայ Առիւծ պատուաւոր մրցանակին:*

*Յասմիկ Տոլմաճեանը նշած է, որ յուշակոթողի տասնամեայ հարկադրական դեգերումները կ'արտացոլան հայ ժողովուրդի մազապուրծ զաւակներու անցած ուղին, միեւնոյն ժամանակ վերստին ընդգծելով պետութեան կողմէն իրականացուող ժխտողականութեան քաղաքականութեան վտանգը:*

*Բացման հանդիսաւոր արարողութեան ներկայ եղած են ՄԱԿ-ի Ժընեւեան գրասենեակի գլխաւոր տնօրէնի տեղակալը, Ժընեւի մէջ հաւատարմագրուած դեսպաններ, Զուիցերիոյ դաշնային խորհրդարանի պատգամաւորներ, Ժընեւի Հանրապետութեան օրէնսդիր մեծ պալատի անդամներ, Ժընեւի քաղաքային խորհուրդի անդամներ, լրագրողներ, ինչպէս նաեւ հայ համայնքի բազմաթիւ ներկայացուցիչներ:*

*Յուշակոթողի տեղադրման զուգահեռ Ժընեւի քաղաքապետարանի եւ ժամանակակից արուեստի հիմնադրամի նախաձեռնութեամբ քաղաքի կեդրոնը՝ Լեմանի լճեզրի երկայնքով տեղադրուած են յուշարձանի տեղադրումն ու բացումը ազդարարող վահանակներ, ինչպէս նաեւ Թրամբլէյ զբօսայգիի մէջ բացուած է հայկական հարցի եւ Օսմանեան կայսրութեան մէջ իրականացուող հայկական ջարդերու եւ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ զուիցերական մամուլի մէջ, 1895-1920 թթ., լոյս տեսած յօդուածներու ընտրանիի ցուցահանդէս:*

*2004թ. Զուիցերիոյ հայ համայնքը դիմած է Ժընեւի քաղաքային խորհուրդին՝ Հայոց ցեղասպանութեան իննսուն ամեայ տարելիցի կապակցութեամբ Ժընեւի մէջ յուշակոթող տեղադրելու խնդրանքով: Վերջինս 2008 թուականին միաձայնութեամբ որոշում կայացուցած է՝ օգուտ յուշակոթողի կառուցման: Յայտարարուած մրցոյթի, որպէս արդիւնք, ութ հոգիներէ բաղկացած ժիւրին միաձայն մրցոյթի յաղթական յայտարարած է ֆրանսահայ արուեստագէտ Մելիք Օհանեանի ներկայացուցած նախագիծը:*

## Ազգային Ժողովը Միաձայն Վաւերացուցած է Հայաստան-Եւրամիութիւն Համաձայնագիրը

*Ազգային ժողովը միաձայն՝ 95 կողմ ձայնով ընդունեց Հայաստան-Եւրամիութիւն Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի վաւերացման մասին օրինագիծը:*

*Հարցը, խորհրդարանի լիագումար նիստին քննարկուած էր նախօրէին:*

*Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան մասին համաձայնագիրը Հայաստանը եւ Եւրամիութիւնը ստորագրած են 24 նոյեմբերի 2017 թուականին, Պրիւսելի մէջ՝ ԵՄ Արեւելեան գործընկերութեան գագաթնաժողովին:*

*«Իր տեսակի մէջ այս կարեւոր փաստաթուղթը նոր էջ է բացել ՀՀ-ԵՄ յարաբերութիւններում: Պէտք է անել հնարաւորը՝ համաձայնագրի արդիւնաւէտ իրագործման ու դրա ընձեռած բոլոր հնարաւորութիւնները ճիշդ կիրառելու համար: Շարունակելու ենք աշխատել բոլոր ուղղութիւններով՝ ի շահ այն ընդհանուր յանձնառութիւնների, որոնք ստանձնել ենք Եւրոպական միութեան հետ այս համաձայնագրի ստորագրումով»:, - դիմատետրի (facebook) էջին վրայ գրած է Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Արմէն Աշոտեանը:*

## «Բացայայտելով Հայկական Պրանտիի Աշխարհը». Forbes Պարբերական



*Հայաստանի մէջ քոնեակի արտադրութիւնը, որ դարերու պատմութիւն ունի, կը շարունակէ մնալ ամենախոշոր գործերէն: Երկրի մայրաքաղաք Երեւանը կրնայ պարծենալ անով, որ այստեղ մէկ շունչին բաժին հասնող քոնեակի թորիչները աւելի շատ են, քան աշխարհի որեւէ այլ քաղաքի մէջ, նոյնիսկ ֆրանսական Քոնեակին մէջ: Այս մասին գրուած է Forbes պարբերականին մէջ հրապարակուած լայնածաւալ յօդուածին մէջ, որ վերնագրուած է՝ «Բացայայտելով հայկական պրանտիի աշխարհը»:*

*Հեղինակ Ճոզէֆ Միքալեֆ նշած է, որ Հայաստանը ընդհանրապէս յայտնի է որպէս գինիի արտադրութեամբ զբաղող աշխարհի հնագոյն երկիր: Սակայն քոնեակի արտադրութիւնը խորունկ պատմութիւն ունի:*

*Ան ընդգծած է, որ 19-րդ դարու վերջերը Հայաստանի մէջ արդէն ծաղկուն կերպով կը զարգանար քոնեակի արտադրութիւնը: «Հաշուի առնելով քոնեակի հանրաճանաչութիւնը Ռուսիոյ մէջ, որ այդ ժամանակ կը դաշնակցէր Ֆրանսայի հետ, հայկական պրանտին եւս սկսաւ անուանուիլ քոնեակ, որ այժմ կը շարունակուի Հայաստանի, Ռուսիոյ եւ յետխորհրդային շարք մը այլ հանրապետութիւններու մէջ»,- գրած է հեղինակը՝ նշելով, որ յայտնի հայ գործարար Նիքոլայ Շուսթովը իրաւունք ունէր իր արտադրանքը, որ կը մատակարարուէր ռուս ցարին, անուանել քոնեակ: Արդէն 1990 թուականին անոր հիմնած «Շուսթով եւ որդիներ» ընկերութեան պրանտին Փարիզի Universal Expo-ի ժամանակ խիստ մրցակցութեան պայմաններու մէջ կը յաղթէ ֆրանսական Քոնեակ քաղաքի արտադրանքը ներկայացնող ընկերութեան եւ իրաւունք կը ստանայ պաշտօնապէս իր արտադրանքը անուանել «քոնեակ»:*

*«Խորհրդային Միութեան մէջ քոնեակի մէկ քառորդը կ'արտադրուէր Հայաստանի մէջ: 1944 թուականի Եալթայի վեհաժողովի ժամանակ Ժոզէֆ Սթալինը Ուինսթըն Չըրչիլին եւ Ֆրանքլին Ռուզվելթին կը հրամցնէ «Դուին» անունը կրող հայկական քոնեակ, որ արտադրած էր Երեւանի քոնեակի գործարանը»,- գրած է հեղինակը՝ նշելով, որ համաձայն աւանդազրոյցի՝ Չըրչիլ այնքան կը հաւնի հայկական քոնեակը, որ կը համաձայնի Սթալինի հետ, որպէսզի իրեն այդ քոնեակէն պարբերաբար մատակարարէ:*

*«Ներկայիս երկիրը կ'արտադրէ շուրջ 20 միլիոն լիթր քոնեակ՝ մօտաւորապէս 5.7 միլիոն տակառ, որուն 90 տոկոսը կ'արտահանուի: Հայկական քոնեակի արտադրութիւնը ունի քանի մը հետաքրքրական յատկանիշներ: Նախ, այդ արտադրութեան մէջ կ'օգտագործուին խաղողի միայն տեղական տեսակները: Հայաստանի մէջ կը հաշուըլուի խաղողի աւելի քան 200 տեղական տեսակ, որոնց մեծ մասը շատ հին են: Օրէնքով սահմանուած են խաղողի այն տեսակները, որոնք կրնան օգտագործուիլ քոնեակի արտադրութեան համար, որոնց մէջ են Ոսկեհատը, Գառան դմակը, Մսխալին»,- նշած է հեղինակը՝ ընդգծելով, որ Արարատեան դաշտին մէջ աճող խաղողի լայն տեսականին կ'օգտագործուի նաեւ մրգային օղի պատրաստելու մէջ:*

www.massisweekly.com
updated every Friday

## Սուրիոյ Վիճակը կը Մնայ... Բարդ ու Վտանգաւոր

Վերջին տարիներուն Սուրիոյ պատերազմական պայմաններու հետեւանքով, Սուրիահայ մեր Մայր գաղութի ընկերատնտեսական վիճակի դժուարութիւնները, անմիջական զօրակոչի ենթարկեց համայն հայութիւնը եւ յատկապէս Լոս Անճելոսի մէջ ապրող մեր նուիրուած հայորդիներն ու բարերարները, որոնց նիւթաբարոյական անյապաղ զօրակցութիւնը, անցեալ տարիներուն, բալասան դարձաւ Սուրիահայ մեր քոյրերուն եւ եղբայրներուն ամենօրեայ գոյապայքարի դաժան պայմաններու թեթեւացման :

ՍԱՐՖի Օժանդակութեան եւ Վերականգնումի Միացեալ Մարմինս, հետամուտ ըլլալով քաղաքական վերջին անցուդարձերուն եւ պատերազմական տրամադրութիւններուն, յատկապէս Սուրիոյ դէմ ուղղուած, այսօր անգամ մը եւս, կը յայտարարէ զգօն ըլլալ տուեալ պայմաններու հետեւանքով, խուճապի մէջ մատնուելու? Սուրիոյ մեր հայրենակիցներու, մասամբ խաղաղ առօրեան, որովհետեւ ակնյայտ է բոլորիս համար, թէ տարիներ առաջ թափ առած դաժան պատերազմը իր աւարտին չէ հասած տակաւին, այլ կրնայ անսպասելիօրէն անգամ մը եւս մտահոգել մեր ժողովուրդի մասամբ խաղաղ առօրեան:

Յետեւեցէ'ք ՍԱՐՖի յայտարարութիւններուն լրագրով եւ կամ դիմատետրի (Face Book)ի տեղեկութիւններով, տարուելիք աշխատանքներուն, ծրագիրներուն եւ դրամահաւաքի աշխատանքներուն, որպէսզի միասնաբար զօրակցինք ու ձեռք երկարենք Սուրիահայ մեր Մայր գաղութի, ըստ կարիքի, ապահով բարեկարգման:

**ՍԱՐՖի Օժանդակութեան եւ Վերականգնումի**
**Միացեալ Գործադիր Մարմին**

Ապրիլեան Ոգեկոչում
Ի Յիշատակ
Մեծ Եղեռնի Անմեղ Զոհերուն

*Under the Auspices of H.E. Archbishop Hovnan Derderian, Primate of the Western Diocese*

**Vigil-Commemoration of the Victims of the Armenian Genocide**

*Կազմակերպութեամբ՝*

Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ

*Մասնակցութեամբ՝*

Նոր Սերունդ Մշակութային Միութեան

*Յայտագրին մաս կը կազմեն՝*

Նոր Սերունդ Պարախումբը
Ա. Եւ Մ. Յովսէփեան Վարժարանի աշակերտները
Հ.Բ.Ը.Մ.-ի Սկաուտները

*Ելոյթ կ'ունենան երգիչներ՝*

Կարօ Սիւլահեան և Առնօ Մկրտչեան հայրենասիրական երգերով

Monday, April 23, 2018 at 8 pm
St. Gregory Armenian Apostolic Church
*Geragos Hall*
2215 E Colorado Blvd.
Pasadena, CA 91107

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, Ապրիլ 23, 2018-ին երեկոյեան ժամը 8-ին Փասատինայի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Կիրակոս սրահին մէջ:

# ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 98-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ ԲԵՐԱՒ ՄԵԾԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՆ-ՆՈՐ ԽԱՂԵՐԸ



Ամէն տարի, Ապրիլի առաջին օրերուն, Այնթապցիներու մշակութային միութիւնը կ՛ոգեկոչէ յիշատակը Այնթապի յաղթական հերոսամարտի նահատակներուն ու յաղթանակը կերտած հերոսներուն, յիշելով, յիշեցնելով ու վերահաստատելով, որ Այնթապն ու ամբողջ Կիլիկիան հայկական հող էին, հայկական հող կը մնան ու իրենց տեղը ունին մեր պահանջատիրական Դատին մէջ:

Միութիւնը այս տարի եւս 98 տարի առաջ մղուած հերոսամարտին տարեդարձը տօնեց հրապարակային տօնակատարութեամբ մը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 8 Ապրիլի յետմիջօրէին, Կլենտէյլի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ «Գույումճեան» սրահին մէջ:

Յայտագիրը ունէր երկու գլխաւոր բաժին. բանախօսութիւն, գիրքի ողջունահանդէս եւ սրտի խօսքեր, ապա նաեւ գեղարուեստական բաժին: Հանդիսավարն էր ծանօթ արուեստագիտուհի եւ միութեան վարչութեան անդամ Թագուհի Արզումանեան, որ նաեւ մասնակցութիւն բերաւ գեղարուեստական յայտագիրին:

Բացման հակիրճ խօսքով մը, հանդիսավարը անդրադարձաւ պատմական դէպքերուն ու մօտաւորապէս տարի մը տեւած ինքնապաշտպանական հերոսամարտի յաղթական ելքին, հաստատելով, որ նահատակներուն ու յաղթանակի կերտիչներուն կտակը կը մնայ ու պիտի մնայ անկորնչելի: Ամերիկեան ու հայկական քայլերգներուն ունկնդրութենէն ետք, ան հրաւիրեց վեր. Հենրիկ Շահնազարեանը, որ կատարէ բացման աղօթքը, ապա նաեւ ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգելու նահատակներուն յիշատակը:

Գեղարուեստական յայտագիրը մատուցեցին Լիլիթ Խոջայեան (քանոն) եւ Արմէն Ստեփանեան (տուտուկ), իսկ Թ. Արզումանեան ասմունքեց Պարոյր Սեւակէն կտոր մը: Ապա, ան հրաւիրեց միութեան վարչութեան անդամներէն Պրն. Սարգիս Պալմանուկեանը, որպէսզի ներկայացնէ գլխաւոր բանախօսը՝ Ֆրանսայէն հրաւիրուած պատմագէտ ու մշակոյթի գործիչ Փրոֆ. Քլօտ Մութաֆեանը: Ս. Պալմանուկեան խօսեցաւ յարգելի բանախօսին հմուտ պատմագէտի ու հայ մշակոյթի գանձերը պեղելու ու զանոնք աշխարհին ծանօթացնելու յատկանիշներուն մասին, շեշտելով, որ ան ինքն իրեն պարտականութիւն տուած է ըլլալու Հայ մշակոյթի ծանօթացման առաքեալ մը: Իսկ այս հանդիսութեան համար, պատմագէտը ընտրած է Այնթապի հերոսամարտը կանխող ու անոր յաջորդած ժամանակաշրջանը, ցոյց տալու համար որ հայութիւնը Այնթապի ու ընդհանրապէս Կիլիկիոյ մէջ ինչպէ՛ս զոհ գնաց մեծ ուժերու դաւաճանական հաշիւներուն:

Փրոֆ. Մութաֆեան սպառիչ կերպով ներկայացուց նիւթը, իր պատմական ու քաղաքական տարածքներով: Ան պատմական հակիրճ ակնարկով մը գնաց մօտաւորապէս հազար տարի առաջ, ցոյց տալու համար, որ Կիլիկիան դարեր շարունակ եղած է հայապատկան շրջան, աւելի՛ առաջ, քան սելճուքներու, թաթարներու եւ թրքական կայսրութեան տիրապետութեան շրջանները, ապա կեդրոնացաւ Ա. Աշխարհամարտը կանխող շրջանին, նոյնինքն պատերազմի տարիներու իրադարձութեանց ու Սուրիա-Պաղեստին շրջանի ճակատումներուն մէջ հայութեան դերակատարութեան, մինչ զինուորական գործողութեանց ետին, արեւմուտքցի դաշնակիցները գաղտնօրէն դաւեր կը նիւթէին Օսմանեան կայսրութեան մնացորդները բաժնեկցելու, արաբական երկիրներուն վրայ տիրակալութիւն հաստատելու նպատակով, առանց ետ մնալէ ներքին մրցակցութիւններէ, որոնց հետեւանքով, պատերազմէն պարտուած Թուրքիան, Քեմալական շարժումին ճամբով, լաւագոյնս օգտուեցաւ դաշնակիցներու սակարկութիւններէն, օգտագործեց համայնավարացած Ռուսիոյ հետ դաշնակցելու խաղաքարտը: Այս բոլորին իբրեւ հետեւանք, Ցեղասպանութենէն վերապրած եւ իրենց պապենական քաղաքը վերադարձած այնթապցիք, ինչպէս նաեւ կիլիկեան այլ քաղաքներու հայութիւնը հարկադրուեցաւ 1921-էն ետք պարպել Կիլիկիան, հակառակ այն աղաղակող իրողութեան, որ այնթապցիք, 1 Ապրիլ 1920էն սկսեալ իրենց մղած բազմահանգրուան ինքնապաշտպանութիւնը պսակած էին յաղթանակով, պարտութեան մատնելով թրքական ուժերը եւ խաղաղութեան համաձայնութիւն պարտադրելով անոնց: Այս բոլորին մասին, բանախօսը ցոյց տուաւ նոյնինքն ֆրանսացի յուշագրողներու վկայութիւնները, աւելցնելով, որ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ միջեւ արտաքոյ մրցակցութիւնը եւ քեմալական յիշ-

Շար.ը էջ 19

# ԲԱՑԱՌԻԿ ՀԱՄԵՐԳ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԻ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»Ը ԼԱՐՔԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ԿԱՏԱՐՄԱՄԲ

Անցեալ Կիրակի Ապրիլ 14, 2018 Լոս Անճելոսի «Զիբբըր Հոլ» դահլիճը լեփ լեցուն էր հայ եւ օտար երաժշտասէր հասարակութեամբ: Արդարեւ, «Դիլիջան» համերգաշարի այս տարեշրջանի 6րդ եւ վերջին ելոյթն էր կը զուգադիպէր Մեծ Եղեռնի 103րդ տարեդարձին:

Երկու բաժիններէ բաղկացած յայտագրի առաջին մասին մէջ Լարք Երաժշտանոցի 100 հոգիներէ բաղկացած «Գեղարդ» երգչախումբը, խմբավարութեամբ Վաչէ Պարսումեանի, ներկայացուց գերման երգահան Ալֆրէտ Զինիթքիի «Գոնչերթօ երգչախումբի համար»ը: Արդարեւ, սոյն ուտանական գործն առնուած էր միջնադարու հայ մեծ բանաստեղծ, փիլիսոփայ եւ երաժիշտ Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» աղօթագիրքէն:

*Ոչ միայն պիտի չմոռնանք, այլ պիտի շարունակենք պահանջել եւ ուշ թէ կանուխ պիտի հասնինք մեր սրբազան երազի իրականացման ամբողջական Հայաստան, ամբողջական հայութեամբ ապրելու համար:*

*Ջերմօրէն կը շնորհաւորենք մեր սիրելի Համբարձում Աղպաշեանը այս հատորին համար, մաղթելով իրեն նոյն բովանդակութեամբ նորանոր հատորներ:*

# ՀՐԱՆԴ ՏԻՆՔ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ Է «ԿԸ ԽՕՍԻՆ ԿԵՍԱՐԱՑԻ ՀԱՅԵՐԸ» ԳԻՐՔԸ

*Վկայակոչելով Հրանդ Տինք հիմնադրամի կայքէջի հրապարակած լուրը՝ Akunq.net-ը հաղորդած է, թէ հիմնադրամը տպագրած է «Լռութեան ձայնը 5-րդ-կը խօսին կեսարացի հայերը» գիրքը:*

*Աղբիւրին համաձայն՝ 2011 թ. ի վեր իրականացուող «Անատոլիայի հայերու բանաւոր պատմութեան նախագիծ» լոյս տեսած գիրքին մէջ ներկայացուած են 28 հոգիի հետ կատարուած հարցազրոյցները:*

*Հարցազրոյցներէն բացի՝ գիրքի մէջ տեղ գտած են նաեւ Հրանդ Տինք հիմնադրամի պատմութեան ծրագիրի մէջ աշխատող պատմաբան Մեհմէդ Փոլաթելի առաջաբանը եւ գիրքը կազմողի՝ դոկտոր Իճլալ Այշէ Քիւչիւքքըրճայի վերջաբանը:*

*Նոյն շարքի միւս գիրքերու նման, «Կը խօսին կեսարացի հայերը» գիրքի մէջ եւս ընդգրկուած են արեւմտահայութեան՝ Ցեղասպանութեան վերաբերեալ յուշերը եւ Թուրքիոյ հայերու՝ սեփական ինքնութեան մասին պատկերացումները:*

*Ըստ գիրքի՝ Անատոլիայի մէջ հանրապետական շրջանին այն հագուագիւտ քաղաքներէն մէկը եղող Կեսարիան, ուր տակաւին կը շարունակէն հայեր ապրիլ, 1927 թ. մարդահամարի տուեալներով պաշտօնապէս գրանցուած են 1978 հայեր: Այդ թիւը 1932 թ. Նուազած է 1600-ի, 1960-ին՝ 800-ի, իսկ ներկայիս՝ գրեթէ 0-ի: Յատկապէս 1950-ական Թուականներուն Կ. Պոլիս արտագաղթած կեսարացի հայերու մեծ մասը հաստատուած է Սամաթիա Թաղամասի մէջ:*




ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ------------------------------------------
**Address:** ---------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**----------------------- **Email:** -------------------------

# ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՑ
# ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ Տ.Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՂԻՇԷ ՏԷՐՏԷՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ 1963

ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

### Ժամանում

*Երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը անտարակոյս եղաւ Հայ Եկեղեցւոյ նորագոյն պատմութիւնը կերտող Հայրապետը իր աննախընթաց այցելութիւններով գրեթէ աշխարհի չորս կողմ ցրուած իր հօտին, յատկապէս ցրուած Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներու մէջ: Նոյն ատեն որպէս Հայրապետ Հայոց պետական անձանց եւ օտար յարանուանութեանց պետերուն անձնապէս հանդիպելով եւ անոնցմէ շատեր Մայր Աթոռ հրաւիրելով տարեկան հանդիսութեանց առիթներով: Մենք անձնապէս յաճախ ներկայ եղանք առաջնահերթ այցելութեանց ի Մայր Աթոռ սկսեալ 1958 թուականէն, ականատես ըլլալով Ուղղափառ, Կաթոլիկ եւ Անկլիգան բարձրաստիճան հոգեւորականներու ներկայութեանը: Առաջին այցելութեանս կը յիշեմ Հնդիկ Մալապար Պասիլիոս Բ. Կաթողիկոսին այցելութիւնը Մայր Աթոռ 1958 թուին:*

*Հայ Եկեղեցւոյ բովանդակ պատմութեան մէջ առաջին անգամն էր որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հնդկաստան պետական այցելութեամբ կը հասնէր 1963 թուի Հոկտեմբերին: Հայրապետական անդրանիկ այցելութիւնը ունէր անշուշտ կրօնական հանգամանք, նկատի ունենալով որ Հայրապետը Հնդկաստան կը մեկնէր Հնդիկ Մալապար մեզի դաւանակից եկեղեցւոյ հովուապետ Պասիլիոս Բ. Կաթողիկոսի հրաւէրով: Մայրաքաղաք Նիւ Տելհի հասած էր նաեւ Երուսաղէմի Հայոց Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանը դիմաւորելու համար Հայոց Հայրապետը եւ ընկերակցելու Նորին Սրբութեան: Հայրապետական շքախումբին մաս կը կազմէին Վրաստանի հայոց Առաջնորդ Կոմիտաս Եպս. Տ. Ստեփանեան, դաւազանակիր Արսէն վարդապետ Պէրպէրեան, եւ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտեան: Նիւ Տելհիի օդակայանին մէջ Հայրապետը կը դիմաւորէին Հնդկահայ թեմի եկեղեցական ու թեմական վարչութիւնները՝ գլխաւորութեամբ Դաւիթ Վրդ. Սահակեանի եւ պետական նախարար Ա. Մ. Թոմասի:*

### Պետական Այցելութիւններ

*Վազգէն Ա. Հայրապետ հասած օրն իսկ երկու պաշտօնական եւ պետական այցելութիւններ կուտար, նախ Մահաթմա Կանտիի յուշարձանին ծաղկեպսակ զետեղելով, եւ ապա Հնդկաստանի Նախագահ Ռադհագրիշնային որուն պալատին առջեւ Հայրապետը զինուորական պատիւներով կ՚ընդունուէր: Վազգէն Կաթողիկոս կը շնորհաւորէր Նախագահը «Լոյսի Տօնին» առիթով որ կը զուգադիպէր իր այցելութեան: Կիրակի նոյեմբեր 17-ին, ընկերակցութեամբ Եղիշէ Պատրիարքի Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նիւ Տելհիի Անկլիգան եկեղեցին կ՚այցելէր եւ աւարտին կը քարոզէր հայ եւ անկլիգան եկեղեցիներու եղբայրական յարաբերութեանց մասին, անդրադառնալով մասնաւորա- բար իր Լոնտոն այցելութեան ամիս մը առաջ ուր հանդիպում ունեցած էր Քենթըրպըրիի Արքեպիսկոպոս Մայքլ Րեմզիի հետ:*

### Հնդիկ Մալապար Ս. Յակոբ Եկեղեցին

*Նոյն օր Հայոց Հայրապետը կ՚այցելէր քաղաքի մեզի դաւանակից Հնդիկ Մալապար Ս. Յակոբ Եկեղեցին ուր «բոլոր հաւատացեալները սպիտակ զգեստաւորուած, ձեռքերնին վառ մոմերով, տղամարդիկ առանձին եւ կանայք առանձին կանգնած, երկիւղածօրէն կ՚ընդունէին Հայոց Հայրապետը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր ողջոյնի խօսքին մէջ կը յայտնէր թէ մի քանի օրէն Քոթայեամ պիտի մեկնէր Մալապար Եկեղեցւոյ հովուապետին հրաւէրով: Նոյն օր Հայրապետը պաշտօնական այցելութիւն մը կուտար երկրի վարչապետին՝ Ջավահարլալ Նեհրուին, եւ ապա Մատրաս կը մեկնէր այցելելու հայոց Ս. Աստուածածին եկեղեցին որուն շուրջ կազմուած էր Հնդկաստանի առաջին հայ գաղութը 18-րդ դարէն սկսեալ: Եկեղեցին կառուցուած էր 1772-ին որ կը նշէր նաեւ Մատրասի հայկական տպարանի բացման տարին: Հոն Յարութիւն Աւ. Քհնյ Շմաւոնեան հիմնած էր իր սեփական տպարանը 1789-ին, հրատարակելով առաջին լրագիրը՝ «Ազդարար»:*

### Քոթայեամ, Մալապար Եկեղեցին

*Ընկերակցութեամբ Երուսաղէմի Հայոց Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանին Վազգէն Ա. Կաթողիկոս Քոթայեամ կը ժամանէր նոյեմբեր 19-ին, Մալապար Եկեղեցւոյ Աթոռանիստը Քերալա նահանգին մէջ, որ Հնդկաստանի ամենէն հին եկեղեցին է, եւ որուն հիմնադիրը ճանչցուած է Ս. Թովմաս Առաքեալ: Առաքեալի նահատակութենէն ետք հաստատուած է Մալապարցիներուն Եկեղեցին որ Հայ Եկեղեցւոյ հետ հինգ դաւանակից եկեղեցիներէն մին կը հանդիսանայ: Վազգէն Վեհափառ Հայրապետի այցելութեան օրերուն Մալապար Եկեղեցւոյ հաւատացեալներուն թիւը 1,500,000-ի կը հասնէր, կաթողիկոսարանին ենթակայ 10 թեմերով, 800 հոգեւորականներով, եւ 1000 եկեղեցիներով:*

*Քոթայեամ չհասած, Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքին դիմաւորութեան եկած էին «բազմահազար ժողովուրդ, կազմելով հսկայական թափօր մը» որ մուտք պիտի գործէր քաղաքը, եւ ի վերջոյ Կաթողիկոսն ու Պատրիարքը նորակերտ Կաթողիկոսարանին բակը պիտի մտնէին ծովածաւալ բազմութեան ընդմէջէն որոնք, «օրինակելի կարգապահութեամբ կը սպասէին հիւրերուն»:*

### Պասիլիոս Բ. Կաթողիկոսին Մօտ

*Մայր Տաճար մտնելով Վազգէն Ա. Հայրապետ եւ Եղիշէ Պատրիարք, Կոմիտաս Եպիսկոպոս եւ երկու վարդապետները աւագ սեղան կը բարձրանային, Հայոց Հայրապետը կը խնկարկէր, մինչ Կոմիտաս Սրբազան «Ուրախ լեր» շարականը կ՚երգէր, որմէ ետք Կաթողիկոսը կուտար Ս. Էջմիածնի օրհնութիւնը Մալապար Եկեղեցւոյ Պասիլիոս Բ. 93-ամեայ ծերունի Կաթողիկոսին որ կաթուածահար կը սպասէր վեհարանին մէջ: Վեհարան բարձրանալով Վազգէն Ա. եւ Պասիլիոս Բ. Կաթողիկոսները ջերմօրէն գիրար կ՚ողջունէին:*




*Երեկոյեան կաթողիկոսարանի շրջափակին մէջ հաւաքուած աւելի քան 30,000 Մալապար հաւատացեալներու ներկայութեան Հայոց Հայրապետը կուտար իր պատ- գամը, շրջապատուած տասնեակ մը եպիսկոպոսներով: Պասիլիոս Կաթողիկոսի փոխանորդը, Դիոնիսիոս մետրապոլիտը կը ներկայացնէր Ամենայն Հայոց Կաթողիկոսը որ իր կարգին իր գոհունակութիւնը կը յայտնէր որ բացառիկ ընդունելութեամբ կ՚ողջունէր Մալապարի մեր քոյր եկեղեցւոյ պետը՝ Նորին Սրբութիւն Պասիլիոս Կաթողիկոսն ու հաւատացեալները: Աւելի ուշ ի պատիւ Հայ Եկեղեցւոյ պատուիրակութեան ճաշկերոյթ կը տրուէր վեհարանի սեղանատան մէջ:*

*Յաջորդ օրերուն նախապէս պատրաստուած ծրագրին համաձայն Վազգէն Հայրապետ կ՚այցելէր Մալապար Եկեղեցւոյ թեմերը որոնք միասնաբար Նոյեմբեր 20-ին կը պատուէին Հայոց Կաթողիկոսն ու Պատրիարքը Քոթայեամի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ սրահին մէջ ուր ներկայ էին օտար եկեղեցիներու ներկայացուցիչներ եւ պետական անձինք: Հայրապետը այցելեց նաեւ Հոգեւոր ճեմարանը որ այդ օրերուն կը տօնէր հաստատութեան 150 ամեակը: Ս. Պատարագի աւարտին կը քարոզէր Երուսաղէմի Հայոց Եղիշէ Պատրիարքը «գհաւատս պահեցի» բնաբանով, որ տեղւոյն վրայ անգլերէնի եւ տեղական լեզուին կը թարգմանէին:*

### Նիրանամ Հնդկաստանի Առաջին Եկեղեցին

*Նոյեմբեր 23-ին Հայ Եկեղեցւոյ պատուիրակութիւնը Նիրանամ կը հասնէր, ուր Ս. Թովմաս Առաքեալ հիմնած է քրիստոնէական առաջին եկեղեցին Հնդկաստանի մէջ: Տ.Տ. Վազգէն Ա. Հայրապետը ողջունելու եկած էին «աւելի քան 120,000 ծով բազմութիւն մը որ խորապէս յուզած է Հայոց Հայրապետը որ պատշգամէն կը դիտէր» ինչպէս կը կարդանք «Էջմիածին» ամսագրի հաղորդագրութեան մէջ:*

*Յաջորդ օր Կիրակի նոյեմբեր 24-ին պատմական դէպք մը կատարուեցաւ Նիրանամի մէջ երբ Վազգէն Հայրապետ Ս. Պատարագ մատոյց ճեմարանի ընդարձակ պարտէզին մէջ կառուցուած շարժական սեղանին վրայ՝ ի ներկայութեան Մալապար բոլոր եպիսկոպոսներուն, հոգեւորականութեան եւ շուրջ 12,000 ներկաներու: Սեղանին կը սպասարկէր Կոմիտաս Եպիսկոպոս, ճաշու գիրքը կը կարդար Եղիշէ Պատրիարք, եւ սարկաւագի բաժինը կ՚երգէին Արսէն եւ Դաւիթ վարդապետները, իսկ դպրաց բաժինը՝ Արթուն Հատիտեան եւ Աստուր Կիւզէլեան: Կիւզէլեան նախկին սաներէն էր Անթիլիասի Դպրեվանքին եւ տողերս գրողին դասակից, որ միեւնոյն ատեն թարգմանի դերը կը կատարէր Հայրապետի կողքին բոլոր պաշտօնական եւ պետական այցելութեանց ընթացքին:*

*Նոյն երեկոյին հրաժեշտի ընդունելութիւն մը կը տրուէր նախագահութեամբ ծերունի Պասիլիոս Բ. Կաթողիկոսին՝ շրջապատուած իր եպիսկոպոսներով: Յաջորդ առաւօտուն երկու Հովուապետները ողջագուրմամբ նուէրներ կը փոխանակէին, եւ հայոց պատուիրակութիւնը կը մեկնէր Պոմպէյ:*

### Պոմպէյ եւ Կալկաթա

*Ամենայն Հայոց Հայրապետը դեկտեմբեր 1-ի Կիրակի օր Ս. Պատարագ կը մատուցանէր Պոմպէյի հայոց Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ որ կառուցուած էր 1796 թուին, իսկ ամսու 3-ին Կալկաթա կը հասնէր եւ առ դրանն Ս. Եկեղեցւոյ կարգը կը կատարէր Ս. Նազարէթայ հայոց եկեղեցիին մէջ: Սա եւս 18-րդ դարուն կառուցուած եկեղեցի մըն է որուն բակին մէջ առաջին հայերէն տպարանը բացուած է ուր Աբրահամ Կրետացի Հայոց Կաթողիկոսը (1734-1737) հրատարակած է իր «Պատմութիւն Նադր Շահին» գիրքը: Յաջորդող հարիւր եւ աւելի տարիներուն Կալկաթայի հայ գաղութը հայեցի կրթութեան եւ մշակոյթի կարեւոր նուաճումներ արձանագրած է Մարդասիրական ճեմարանի հաստատումով, Մեսրոպ Թաղիադեանցի գրական վաստակով եւ այլ տպարաններու եւ հրատարակութեանց հիմնադրութեամբ:*

*Կալկաթայի երբեմնի 20,000 հայ գաղութէն մնացեր էին միայն 500 հոգի: Յաջորդ օր Վազգէն Հայրապետ կ՚այցելէր Կալկաթայի*

Շար.ը էջ 16

# ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻՑ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՓՐՈՖ. ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

*Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում եւ նախօրէին տեղի ունեցած արեւմտահայութեան զանգուածային բռնի տեղահանութիւններն ու կոտորածները անմիջական իրենց արձագանքն են գտել եւ դատապարտուել տուեալ ժամանակուայ համաշխարհային մամուլում:*

*Հակառակ այսօրուայ թուրքական ուրացումներին այդ թերթերում եւ ամսագրերում բերուած վկայութիւնները լիովին հաստատում են 20րդ դարի սկզբին տեղի ունեցած հայերի առաջին ցեղասպանութիւնը:*

*Փաստերը ցոյց են տալիս, որ զանգուածային բռնագաղթն ու ջարդերը Արեւմտեան Հայաստանի քաղաքներում եւ գիւղերում, ինչպէս նաեւ փոքր Ասիայի տարածքում գտնուող հայաբնակ վայրերում, չէին առնչւում ռազմական նկատա-ռումներով կատարուող միջոցառումների հետ, քանի որ հայութեան բնաջնջման ծրագիրը նախօրօք մշակուած եւ որոշուած էր «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէի կողմից: Հայկական հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրել էին արեւմտահայութեանը ի սպառ բնաջնջելու ճանապարհը:*

*Մի յօդուածի սահմաններում հնարաւոր չէ կանգ առնել տուեալ ժամանակուայ մամուլում հրապարակուած բազմաթիւ յօդուածների եւ փաստագրական նիւթերի վրայ:*

*Այնպէս որ ստորեւ տալիս ենք մի քանի քաղուածքներ այդ հրապարակումներից, որոնք հաւաստի պատկերացում են տալիս արեւմտահայութեան նկատմամբ կատարուած ցեղասպանութեան մասին:*

***

*«Այսպիսով, հայկական հարցի էութիւնը ներկայումս կայանում է ոչ թէ նրանում, որ երեք շաբաթուայ ընթացքում տեղի են ունեցել 70 բռնաբարութիւն, այլ նրանով, որ մեր հաւատակից քրիստոնեաների անձնական անձեռնմխելիութեան դէմ կատարուող այդ յանձնափոր-ձերը տեղի պն ունենում կեդրո-նական երիտթուրքական կառավա-րութեան բարեհաճ թոյլտւութեամբ եւ գիտութեամբ» («Նովոյէ Վրեմեայ» Մայիս 22, 1913 Սան Փեթերպուրկ: Ռուսերէն):*

***

*«Ներկայումս այնպիսի սարսափելի մի գործ է կատարւում, որի համեմատութեամբ նսեմանում է այն ամէնը, ինչ մարդկութիւնը տեսնում է ահա արդէն մէկ տարի շարունակ տեղի է նունենում մի ամբողջ ժողովրդի բիրտ եւ կանոնաւոր ոչնչացում:*

*Այս իրադարձութիւնը, գուցէ եւ աննախադէպ է համաշխարհային պատմութեան մէջ: Ապտուլ Համիտի օրօք հայերի կոտորածը սահմանափակւում էր որոշ տեղանքով: Այսօր խօսք է գնում ամբողջ ժողովրդի ոչնչացման մասին՝ Օսմանեան կայսրութեան ամբողջ տարածքում, ամենուրեք, որտեղ էլ որ ապրելիս լինեն նրա ներկայացուցիչները: (Journal de Geneve, Sepetember, no. 95 1915):*

***

*Ատրիանապոլսի բոլոր հայերը՝ մօտ 1800 հոգի, ձերբա-կալուել են, տղամարդիկ անյապաղ աքսորուել են փոքր Ասիա, իսկ կանայք ու երեխաները երկու օր պահուել են բանտում ենթարկուելով բանտապահների կոպիտ յարձակումներին: Նրանցից ոմանց յետագայում նստացրել են առագաստանաւերը, որպէսզի տեղափոխուեն փոքր Ասիա: Երկու նաւակներ սուզուել են Ռոտոստոյի մօտ եւ դրանցում եղածների մեծ մասը խեղդուել է»: (The Times, December 215 1915):*

***

*«Թուրքերն սկսեցին (էրզրումի հայերին) թալանել, բռնաբարել կանանց, սպաննել երեխաներին եւ ի վերջոյ դժբախտները գլխովին բնաջնջուեցին: Դիակները նետում էին գետերը եւ ինչպէս հաղորդում են ականատեսները, դիակների կոյտից ջուրը կանգ էր առնում: Ամբողջ տեղի ունեցածը անհնար է նկարագրել: Կարեիլ է ենթադրել, որ ամէն ինչ կազմակերպուել էր խստիւ ծրագրով, եւ տուեալներ կան կարծելու, որ այդ ծրագիրը յուշել էին գերմանացիները: (Արմեանսկի վեսթնիկ, Թիւ 7, 1916, Ռուսերէն):*

***

*«Հայ երեխաներին ծովն էին նետել շան լակոտների պէս, մեծահասակ հայերին դուրս էին հանել քաղաքի սահմաններից եւ խումբ խումբ գնդակահարել: Ջահել աղջիկների վաճառել էին հարեմների համար, իսկ հարուստ հայերի ունեցուածքը վաճառքի համար աճուրդ էր հանուել Տրապիզոնի տաճարում...» (Le Temps, 7 V5 1916):*

***

*«... Թուրքերը մի առանձին յամառութեամբ ու վայրագութեամբ են աւերում հայկական եկեղեցիները: Եւ այդպէս է ամենուրեք: Մուշում փրկուել է միայն մէկ եկեղեցի եւ դա էլ այն պատճառով, որ նրանում տեղա-ւորուած էր թուրքերի ալիւրի պահեստը: Սրբապատկերները ամենուր եւ միշտ ապականուած են ու պղծուած ամենանողկալի, ամենաբարբարոսական ձեւով: Թուրքն ասես ուզում է աշխարհի երեսից ջնջել այն ամէնը, ինչ հայկական է»: (Գաւզազսկոյէ Սլովօ, Յունուար, 22, 1917, թիւ 18, ռուսերէն):*

***

*«Տրապիզոնում թուրքերը գնդակահարեցին, ջրամոյն արեցին կամ ողջակիզեցին ոչ միայն յետ մնացած ռուս զինուորներին, որոնց ճանկել էին իրենց առաջխաղացման ընթացքում, այլեւ խոշտանգում էին իրենց ձեռքն ընկած հայերին:*

*Տրապիզոնում հայ երեխաներին լցրեցին պարկերը, բերանները կապեցին ու նետեցին ծով: (L'Asie Francaise, Janvier, April, Paris, 1918 No. 1725 9.23):*

***

*«Աշխարհ գիտէ եւ սա է ճշմարտութիւնը, որ հայերի կոտորածները կազմակերպուեցին կեդրոնական կոմիտէի հրամաններով: Այդ հրամանները հաղորդուեցին առանձին պատուիրակների միջոցով եւ գործադրուեցին աւազակների ձեռքով իր իսկ կեդրոնական կոմիտէի հսկողութեամբ» (La Renaissance, December 15, 1918, No. 7):*

***

*«Եթէ խաղաղութեան շարժումը պայքարում է այն բանի համար, որպէսզի վաղեմութեան ժամկէտ չլինի մարդկութեան դէմ կատարուած յանցագործու-թիւնների համար, ապա դա արւում է այն հաշուով, որպէսզի ապագայում սարսափի այդ ակտերը չկարողա-նան անգամ ծնուել որոշ խելագար-ների ուղեղներում: Այդ գործը արդար է եւ այն պէտք է յաղթանակի: Ահա թէ ինչո՞ւ ենք մենք յիշում հայերի ջարդի մասին»: (L'Humanite, 23 April5 1965):*

***

*Այս տարուայ կոտորածները իրականում առ աւելի առաջ գնացին, քան 1895-1895 թուա-կաններինն էր: Արեւմտեան եւրո-պայից հասած տեղեկութիւնները կամ այլ աղբիւրներից ստացուած վկայութիւնները լիովին համընկնում են իրար հետ: Ճշմարտութիւնն այն է, որ փոքր Ասիայի արեւելեան եւ հիւսիսային շրջանների, ինչպէս նաեւ Հայաստանի քրիստոնեայ բնակչութեանը կանխամտածուածօրէն բնաջնջւում է ամբողջութեամբ: Զինուորական տարիք ունեցող մարդիկ սպանուել են, իսկ երիտասարդ կանայք մտել են թրքական հարեմները եւ երբեմն իրենց զաւակների հետ բռնութեամբ ընդունել մահմետականութիւն (The New York Times, October 10, 1915):*

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՑ

Շարունակուած էջ 15-էն

*Դաւթեան Օրիորդաց Վարժարանը՝ հիմնուած 1924-ին, եւ ապա Մարդասիրական ճեմարանը՝ հիմնուած 1821-ին, որուն երեք յարկանի դպրոցաշէնքը աւելցուցած էն 1884-ին: Այդ օրերուն ճեմարանը 120 աշակերտներէ եւ 9 դասարաններէ կը բաղկանար երբ Հայոց Հայրապետը աշակերտներու ծափողջոյններով դպրոց մուտք կը գործէր:*

### Հայրապետական Ս. Պատարագ

*Կիրակի հոկտեմբեր 8-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական սուրբ պատարագ կը մատուցանէր Նազարեթեայ եկեղեցւոյ մէջ եւ կը քարոզէր «Էջ Միածինն ի Հօրէ ահեղ զօրութեամբ» բնաբանով: Նոյն երեկոյեան Հայրապետը կ'այցելէր Կալկաթայի Անկլիգան Ս. Պօղոս Մայր Տաճար, եւ յաջորդ օր Մարդասիրական ճեմարանի չորս-յարկանի մասնաշէնքին հիմնարկէքը կը կատարէր 200ի չափ նախատեսուած աշակերտութեան համար: Հոն խօսք կ'առնէր Եղիշէ Պատրիարք ու կ'ըսէր թէ «մայրենի լեզուն է որ մեր առջեւ կը բանայ մեր հաւատքի քաղցրութիւնները եւ մեր մշակոյթի գեղեցկութիւնները»:*

*Երեկոյեան գրական եւ գեղարուեստական յայտագիր մը կը գործադրուէր Աստուր Կիւզէլեանի ղեկավարութեամբ, խմբերգներով եւ արտասանութիւններով, որուն համար Վեհափառ Վազգէն Հայրապետ իր գնահատանքի խօսքը կ'ուղղէր Կիւզէլեանին որ «այնքան շնորհալի կերպով հարազատութեամբ հնչեցուց Հայաստանեան երգերու գուարթ եւ կենսալի ոգին Գանգեսի այս ափերուն վրայ»:*

### Հրաժեշտ

*Հրաժեշտի Ս. Պատարագը Դեկտեմբեր 15-ի կիրակին կը մատուցանէր Երուսաղէմի Հայոց Պատրիարքը եւ կը քարոզէր «հաւատք քո կեցուցին զքեզ» բնաբանով, ընդգծելով Ամենայն Հայոց Հայրապետի Հնդկաստան կատարած պատմական այցելութեան մեծ նշանակութիւնը: Նոյն երեկոյեան Պատրիարք Հայրը Պէյրութ կը մեկնէր, եւ Վազգէն Հայրապետ իր շքախումբի անդամներուն հետ Մոսկուայի վրայով Մայր Աթոռ Ս. Էջմիածին կը վերադառնար Հնդկաստան կատարած հովուապետական պատմական այցելութենէն ետք:*


MARONIAN
INSURANCE SERVICES
Since 1975, we have proudly served our community's insurance needs.
CA Insurance Lic. #0C99815



WELCOME HOME & AUTO INSURANCE
Along with all of our other *Trusted Insurance Services*

We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A
PERSONALIZED QUOTE
(818) 500 9305

## Ի՞ՆՉ ԿԱՐԵԼԻ ՉԷ ՈՒՏԵԼ ԱՌԱՒՕՏԵԱՆ ՊԱՐԱՊ ՍՏԱՄՈՔՍԻՆ



Առաւօտը օրուան սկիզբն է, ու իրմէ կախեալ է, թէ ինչ ընթացք պիտի ունենայ ամբողջ օրը: Ուստի շատ կարեւոր է օրը սկսիլ ճիշդ նախաճաշով: Չէ՞ որ նախաճաշէն կախեալ է, թէ ինչպէս պիտի զգաք ամբողջ օրուան ընթացքին:

Բոլորս ալ վարժուած ենք առաւօտեան տարբեր ուտելիքներ ուտելու, սակայն քիչեր կը մտածեն, թէ որ ուտելիքները ժխտական ազդեցութիւն կ՛ունենան մարմնին վրայ: Առաջին ուտելիքը շատ կարեւոր է, քանի որ պարապ ստամոքսին կ՛ուղարկէք սնունդ, որ պէտք է ըլլայ սննդարար եւ, որ ամենակարեւորն է, չվնասէ առողջութեան:

Շատ ուտելիքներ, որոնք կը տեսնենք նախաճաշի սեղանին, ընդհանրապէս կարելի չէ ուտել պարապ ստամոքսին:

Այսպէս՝

1. Սիթրուսային միրգեր- անոնք ունին գերզգայնութիւն յառաջացնելու յատկութիւն: Նոյնիսկ, եթէ գերզգայուն չէք, առաւօտեան սիթրուսային միրգ ուտելը կրնայ յանգեցնել գերզգայնութեան նշաններու: Կարելի չէ այդպէս ծանրաբեռնել լեարդը: Պարապ ստամոքսին նարինջի հիւթ խմելը կրնայ կազերու յառաջացման պատճառ դառնալ:

2. Պանան- պանանը կը պարունակէ մեծ քանակութեամբ մակնեզիում, որ կը բարելաւէ սրտի աշխատանքը: Սակայն պէտք չէ առաւօտեան արթննալէ անմիջապէս յետոյ պանան ուտել: Պարապ ստամոքսին կերած պանանը կրնայ խախտել մարմնի մէջ քալսիումի եւ մակնեզիումի կշիռը: Այնպէս որ, մի զարմանաք, եթէ առաւօտեան պանան ուտելէ յետոյ ամբողջ օրուան ընթացքին թուլութիւն զգաք:

3. Հում բանջարեղէն- առաւօտեան հում բանջարեղէն ուտելը նոյնպէս կրնայ կազերու յառաջացման պատճառ դառնալ: Խնդիրը հում բանջարեղէնի թթուայնութիւնն է, որ կը վնասէ ստամոքսին պատերուն:

4. Մրգային մածուն- ի հարկէ, եթէ առաւօտեան մրգային մածուն ուտէք՝ չէք վնասեր ձեր մարմնին այնքան, որքան սիթրուսային միրգերու պարագային: Սակայն, դժուար թէ օգուտ ստանաք: Առաւօտեան մարմնին պէտք չեն յաւելեալ մանրէներ:

5. Պաղ խմիչքներ- պաղ ջուրը ընդհանրապէս վատ կ՛ազդէ մարսողութեան վրայ, այդ իսկ պատճառով կարելի չէ պաղ ջուր խմել ուտելու ընթացքին: Իսկ եթէ առաւօտեան պաղ ջուր խմէք, ուստի ստամոքսը դժուար թէ ուրախանայ: Ամբողջ օրուան ընթացքին պիտի դանդաղեցնէք սնունդի մարսողութիւնը:

6. Քաղցրաւենիք- շատ հնարաւոր է, որ այն մարդիկ, որոնք շաքարախտով կը տառապին, նախապէս առաւօտեան քաղցր բաներ ուտելու սովորութիւն ունեցած ըլլան: Ենթաստամոքսային գեղձը ի վիճակի չէ առաւօտեան բաւականաչափ ինսուլին արտադրել, հետեւաբար՝ առաւօտեան քաղցրաւենիք ուտելը շատ վտանգաւոր է:

Ճիշդ կերէք, եւ ձեր ինքնազգացողութիւնը ձեզ հաճելիօրէն պիտի զարմացնէ:

## ՆՍՏԱԿԵԱՑ ԿԵԱՆՔԸ ԱՌՈՂՋԱԿԱՆ Ի՞ՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ԿՐՆԱՅ ՅԱՌԱՋԱՑՆԵԼ



Ժամանակակից աշխարհի մէջ դժուար է գտնել մէկը, որ գոնէ օրուան կէսը չ՛անցնէ համակարգիչի կամ հեռատեսիլի առջեւ: Որոշ մասնագիտութիւններ կը ստիպեն վարել նստակեաց կեանք, բան մը, որ զգալիօրէն կ՛ազդէ մեր առողջական վիճակին վրայ:

Խօսքը միայն ողնայարի խնդիրներուն մասին չէ: Խնդիրը այն է, որ, երբ երկար ժամանակ նստած կը մնաք, մկաններուն ելեկտրական աշխոյժութիւնը կը նուազի, հետեւաբար՝ ջերմուժի (calorie) այրման գործընթացը կը դանդաղի, այսպէս մենք մէկ վայրկեանի մէջ կ՛այրենք ընդամէնը մէկ քիլօ ջերմուժ: 3 ժամ անց անօթները կը նեղնան, բան մը, որ կ՛ազդէ արեան շրջանառութեան վրայ:

Եթէ օրը 24 ժամ անցնէք նստած վիճակի մէջ, ինսուլինը կը կորսնցնէ իր կարողութիւններուն 40%-ը, որ կը յանգեցնէ 2-րդ տիպի շաքարախտի յառաջացման վտանգի բարձրացման: 2 շաբաթ շարունակ, ամէն օր 6 ժամ համակարգիչի մօտ անցնելով՝ մարմնին մէջ կը բարձրացնէք վատ քոլեսթերոլի մակարդակը, որ կը խթանէ աւելորդ կշիռքի կուտակումը: Երկար ժամանակ չեզոք կեանք վարելով՝ մկանները կը տկարանան, իսկ կշիռքը կորսնցնելուն նպաստող մասնիկները կը պակսին:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## ՉԱՄԻՉԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՐԵԼԻ Է ՄԱՔՐԵԼ ԼԵԱՐԴԸ



Չամիչը արժէքաւոր ուտելիք է ջղային համակարգը հանգստացնելու եւ քունը բարելաւելու համար:

Չամիչի իւրաքանչիւր հատիկ, հակառակ իր փոքրիկ չափին, կը պարունակէ արժէքաւոր, անհրաժեշտ ու մարմնի համար չափազանց առողջարար նիւթեր:

Չամիչի օգտակար յատկութիւնները կը բացատրուին թարմ խաղողի առողջարար ըլլալու փաստով, սակայն արժէքաւոր նիւթերը անոնց մէջ 10 անգամ աւելի շատ են, քան թարմ խաղողի հատիկներուն մէջ: Չամիչը կ՛ամրապնդէ ջղային համակարգը ու կը բարելաւէ քունը՝ շնորհիւ վիթամին B-ի խումբերու մեծ քանակին: Անիկա կարելի է օգտագործել իբրեւ հանգստացնող միջոց, որ կը հանէ մարմնի լարուածութիւնն ու յոգնածութիւնը:

Լեարդը մաքրելը չամիչի միջոցով ամենաարդիւնաւէտ միջոցներէն մէկն է մարմնի բուժման ու քրոնիկ հիւանդութիւններէն ազատելու համար, չէ՞ որ նոյնինքն մարմնի աւելորդ նիւթերով ծանրաբեռնուածութիւնը կը խանգարէ անոր ինքնավերականգնման աշխատանքը, ինչպէս նաեւ զգալիօրէն կը նուազեցնէ դեղօրայքի ու աւանդական բժշկութեան բաղադրատոմսերու ազդեցութիւնը:

## ԱՆԿԱՆՈՆ ՈՒՏԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ ՎՆԱՍԱԿԱՐ Է ՈՒՂԵՂԻՆ ՀԱՄԱՐ

Լոս Անճելոսի մէջ գտնուող Քալիֆորնիոյ համալսարանի հետազօտական խումբը յայտնաբերած է թէ գիշերուան ուշ ժամերուն ուտելու սովորութիւնը հակաառողջապահական երեւոյթ է, ոչ միայն ֆիզիքական առողջութեան, այլ նաեւ՝ մտային առողջութեան համար: Այս ծիրին մէջ գիտնականներ յայտնաբերած են նաեւ, թէ 15 միլիոն ամերիկացիներ աշխատանքային ժամերու պատճառով ունին անկանոն ուտելու սովորութիւն:

Ներկայ կեանքի պայմանները կը պահանջեն երկար աշխատանքային ժամեր, որուն ընթացքին մարդիկ յաճախ կը դիմեն արագ սնունդի, որ հասանելի է բոլորին՝ օրուան բոլոր ժամերու ընթացքին: Այս սովորութիւնը կը խախտէ մարմնի ներքին «ժամացոյցը», որ կը կանոնաւորէ քնանալու, աշխուժութեան, ուտելու եւ մարմնին մէջ հորմոններու արտադրութեան ընթացքը:

Մարմնի ներքին «ժամացոյց»ի խախտումը կրնայ ընթացք տալ երկրորդ տեսակի շաքարախտի զարգացման եւ տկարացնել մարմնի դիմադրողական համակարգը: Սակայն Քալիֆորնիոյ համալսարանի գիտնականները յայտնաբերած են թէ ան նաեւ կրնայ թերացնել սորվելու եւ յիշողութեան կարողութիւնները:

Գիշերուան ուշ ժամերուն ուտելու սովորութիւնը կը խախտէ քնանալու ծիրը, ինչպէս նաեւ քնացած ժամանակ կ՛աշխուժացնէ մարսողութեան համակարգը եւ պատճառ կը դառնայ սրտի արագ տրոփումներուն: Նախապէս կատարուած հետազօտութիւններ պարզած են թէ անկանոն ուտելու եւ քնանալու սովորութիւնները նաեւ կը բարձրացնեն քաղցկեղի, ընկճուածութեան, յոգնածութեան եւ սրտանօթային հարցերու հաւանականութիւնները:

## 7 ԻՐ ՈՐՈՆՔ ԱԿՆԹԱՐԹՕՐԷՆ ԱՒԵԼԻ ԳՐԱՒԻՉ ԿԸ ԴԱՐՁՆԵՆ ԿԻՆԸ

Կան բաներ, որոնք մշտապէս կիները կը դարձնեն գրաւիչ, գայթակղիչ եւ ցանկալի: Անոնք հիմնուած են տղամարդոց հոգեբանութեան վրայ եւ նորաձեւութիւնը ոչինչ կրնայ ընել: Որպէսզի աւելի գրաւիչ զգաք դուք ձեզ՝ հագուեցէք այս ցուցակէն որեւէ բան եւ անպայման ձեր վրայ կը գրաւէք բոլոր հայեացքները:

-Բարձրակրունկ կօշիկ. Համաձայն հետազօտութեան, որ հրատարակուած է «Ցանկալի վարքագիծի արխիւներ»-ուն մէջ, կրունկի բարձրութիւնը ուղիղ համեմատական է կնոջ գրաւչութեան տղամարդու համար: Բայց ատիկա դեռ բոլորը չէ. որ քան բարձր են կնոջ կրունկները, այնքան շատ տղամարդու մօտ կը յայտնուի ցանկութիւն՝ մօտենալ եւ առաջարկել իր օգնութիւնը:

-Փոքր սեւ զգեստ. Շատ աղբիւրներ սեւ գոյնը կը համարեն թիւ 1: Այս գոյնն է, որ կը համարուի ցանկալի եւ ինքնավստահութիւն հաղորդող:

-Բաց ուսեր. եթէ դուք կը կարծէք, թէ տղամարդիկ կը սիրեն միայն կուրծքը եւ յետոյքը, ուստի կը սխալիք: Հետազօտողները պարզած են, որ տղամարդոց կը գրաւեն նաեւ կանացի ուսերը եւ ձեռքերը:

-Որեւէ կարմիր իր. Կիրքի, սիրոյ եւ ռոմանթիզմի գոյնը՝ տղամարդոց եւ կիներու ամենասիրած գոյնը՝ ըստ հետազօտութեան:

-Մարմինը ընդգրկող զգեստ. Երկար ոտքեր, ի հարկէ, շատ գրաւիչ են, սակայն ոչ ոք կրնայ հերքել մեծ կուրծքի եւ «աւազէ ժամացոյց»ի կառուցուածքին գրաւչութիւնը: Պարզուած է, որ կլորիկութիւնները աւելի կը գայթակղեն տղամարդիկը, քան երկար ոտքերով, նիհար աղջիկները: Եթէ դուք ունիք կլորու թիւններ, անպայման ցուցադրեցէք զանոնք:

- Շրթներկ. Նոյնիսկ ամենավատ օրը ձեր վրայ պէտք է շրթներկ ըլլայ: Ֆրանսական համալսարանի գիտնականները պարզած են, որ կարմիր շրթներկով մատուցողուհիներուն տղամարդիկ աւելի յաճախ թէյավճար կը ձգեն: Ապացուցուած է նաեւ, որ բնական դիմայարդարումով կիներ աւելի իրազեկուած եւ վստահելի կ՛ընկալուին:

-Արեւու ակնոցներ. Նորաձեւութեան հետեւող իւրաքան-չիւր աղջիկ գիտէ լաւ արեւու ակնոցներուն արժէքը: Անոնք թէ՛ հայեացքներ կը գրաւեն, թէ՛ կը թաքցնեն յոգնած աչքերը:

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Մանչեսթեր Սիթին՝ Անգլիայոյ Ախոյեան

Անգլիոյի առաջնութեան 33-րդ տուրում Մանչեսթեր Սիթին պաշտօնապէս դարձաւ երկրի ախոյեան: Պեպ Գուարդիոլայի թիմը 3-1 յաղթեց Տոտենհեմին, իսկ Մանչեսթեր Եունայթեդը 0-1 զիջեց Վեստ Բրոմվիչին, որից յետոյ Սիթին անհասանելի դարձաւ երկրորդ տեղում գտնուող Եունայթեդի համար:

33 խաղից յետոյ Մանչեսթեր Սիթին ունի 87, Մանչեսթեր Եունայթեդը՝ 71 միաւոր:

Մանչեսթեր Սիթին 5-րդ անգամ դարձաւ ախոյեան:

## «Արսենալը» Անգլիայում Պարտուել է Բոլոր Արտագնայ Խաղերում

Ֆուտբոլի Անգլիայի պրեմիեր լիգայի 34-րդ տուրի խաղում Լոնդոնի «Արսենալը» Նիւքասլում պարտուեց տեղի համանուն թիմին:

Լոնտոնցիները չնայած առաջինը բացեցին խաղի հաշիւը (14-րդ րոպէին աչքի ընկաւ Ալեքսանդր Լյակազետը), սակայն յետոյ երկու կոլ բաց թողեցին եւ զիջեցին 1:2 հաշուով:

Ինչպէս նշում են անգլիական լրատուամիջոցները, «Արսենալը» 2018 թուականում պարտութիւն է կրել առաջնութեան բոլոր արտագնայ խաղերում: Անգլիայի պրոֆեսիոնալ 4 դիւիզիոնների մասնակից թիմերից ոչ մէկը չունի նման վիճակագրութիւն: Վերջին անգամ լոնտոնցիները մրցակցի հարկի տակ միաւոր վաստակել են անցած տարուայ Դեկտեմբերի 31-ին, «Վեստ Բրոմվիչի» հետ խաղում (1:1):

## Սալահը Ճանաչուեց Պրեմյեր Լիգայի Ամսուայ Լաւագոյն Ֆուտպոլիստ Եւ Սահմանեց Ռեկորդ



«Լիվերպուլի» եգիպտացի յարձակուող Մոհամեդ Սալահը ճանաչուել է Անգլիայի Պրեմյեր լիգայի Մարտ ամսուայ լաւագոյն ֆուտբոլիստ, յայտնում է Պրեմյեր լիգայի կայքը:

Նախորդ ամիս նա մասնակցել է 4 հանդիպման եւ դարձել 6 կոլի ու մէկ գոլային փոխանցման հեղինակ: Այս մրցաշրջանում Սալահը երրորդ անգամ է ճանաչւում Պրեմյեր լիգայի ամսուայ լաւագոյն ֆուտբոլիստ, ինչը ռեկորդային ցուցանիշ է: 25-ամեայ յարձակուողը նման պատուի արժանացել էր նաեւ Նոյեմբերին ու Փետրուարին:

Անգլիայի ընթացիկ առաջնութիւնում Եգիպտոսի հաւաքականի առաջատարը խփել է 29 գոլ եւ միանձնեայ գլխաւորում է ռմբարկուների ցուցակը:

Պրեմյեր լիգայի Մարտ ամսուայ լաւագոյն ֆուտպոլիստի հաւակնորդների թիւում էին նաեւ Սոն Հյոն Մինը («Տոտենհեմ»), Ռոմելու Լուկակուն («Մանչեսթեր Եունայթեդ»), Դավիդ Սիլվան («Մանչեսթեր Սիթի»), Ջենկ Տոսունը («Էվերտոն») եւ Քրիս Վուդը («Բարնլի»):

## Զիդան. «Ինձ Նեարդայնացնում Է Այն, Որ Տեղի Ունեցածը Համարում Են Կողոպուտ»

Մադրիդի «Ռեալի» ֆրանսիացի գլխաւոր մարզիչ Զինեդին Զիդանը չի ընդունում քննադատութիւնը, որը կայ «Եուվենտուսի» դէմ Ախոյեանների լիգայի քառորդ եզրափակիչի պատասխան հանդիպման աւելացուած ժամանակում նշանակուած 11 մետրանոցի վերաբերեալ:

«Ինձ նեարդայնացնում է այն, որ տեղի ունեցածը համարում են կողոպուտ: 11 մետրանոց կար, եւ ես չգիտեմ, թէ ինչի մասին կարելի է խօսել: Ոչ ոք չի կարող հերքել «Ռեալի» պատմութիւնը, քանի որ սա աշխարհի մեծագոյն ակումբն է»,- Զիդանի խօսքը մէջբերում է Marca-ն:

Յիշեցնենք, որ Թուրինում 3:0 հաշուով յաղթելուց յետոյ «Ռեալը» տանը պարտուեց 1:3 հաշուով: Աւելացուած երրորդ րոպէին նշանակուած 11 մետրանոցը դիպուկ իրացրեց պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն, իսկ իտալական թիմի դարպասապահ Ջանլուիջի Բուֆոնը մրցավարի հետ վիճելու համար հեռացուեց:

Կիսաեզրափակիչում «Ռեալը» կը մրցի Գերմանիայի ախոյեան Միւնխենի «Բավարիայի» հետ:

## «Բարսելոնայի» Ռեկորդը

«Բարսելոնան», Պրիմերայի 32-րդ տուրում 2:1 հաշուով յաղթելով «Վալենսիային», անպարտելի շարքի ռեկորդ է սահմանել Սպանիայի առաջնութիւնում, յայտնում է ակումբի կայքը:

Կատալոնական ակումբը չպարտուեց 39-րդ խաղում անընդմէջ եւ գերազանցեց «Ռեալ Սոսյեդադի» ռեկորդը: Բասկերն այդ ռեկորդը սահմանել էին 1980 թուականին, երբ 38 խաղում տարել էին 21 յաղթանակ եւ գրանցել 17 ոչ ոքի:

«Բարսելոնան» Պրիմերայի 39 խաղերում տարել է 32 յաղթանակ եւ 7 հանդիպում աւարտել ոչոքի:

## Ախոյեանների Լիգաի Կիսաեզրափակիչի Զոյգերը

Շուեյցարական Նիոնում Ապրիլի 13-ին տեղի ունեցաւ ֆուտպոլի եւրոպական Ախոյեանների լիգայի կիսաեզրափակիչի վիճակահանութիւնը:

Մրցաշարի գործող գաւաթակիր Մադրիդի «Ռեալին» բաժին հասաւ Միւնխենի «Բաւարիան», իսկ եզրափակիչի մյուս ուղեգիրը կը վիճարկեն անգլիական «Լիվերպուլը» եւ իտալական «Ռոման»:

«Բաւարիան» ու «Լիվերպուլը» առաջին խաղերը կ՚անցկացնեն տանը: Եզրափակիչում դաշտի տէր կը համարուի «Բավարիա» - «Ռեալ» զոյգի յաղթողը:

Ախոյեանների լիգայի կիսաեզրափակիչի առաջին հանդիպումները կը կայանան Ապրիլի 24-ին եւ 25-ին, իսկ պատասխան խաղերը՝ Մայիսի 1-ին եւ 2-ին: Եզրափակիչը տեղի է ունենալու Մայիսի 26-ին Կիեւում:

## Եւրոպայի լիգա. «Արսենալը» Կը Խաղայ «Աթլետիկոյի» Հետ

Եւրոպայի լիգայի կիսաեզրափակիչում Լոնտոնի «Արսենալը» կը մրցի Մադրիդի «Աթլետիկոյի» հետ: Շուեյցարական Նիոնում Ապրիլի 13-ին անցկացուած վիճակահանութեան արդիւնքում անգլիական ակումբն առաջին հանդիպումը կ՚անցկացնի տանը:

Կիսաեզրափակիչի միւս զոյգը կազմեցին աւստրիական «Զալցբուրգը» եւ ֆրանսիական «Մարսելը»: Այդ դիմակայութեան առաջին խաղը տեղի կ՚ունենայ Մարսելում:

Եզրափակիչում դաշտի տէր կը համարուի «Մարսել» - «Զալցբուրգ» զոյգի յաղթողը:

Եւրոպայի լիգայի կիսաեզրափակիչի առաջին հանդիպումները կը կայանան Ապրիլի 26-ին, իսկ պատասխան խաղերը՝ Մայիսի 3-ին: Եզրափակիչը կ՚անցկացուի Մայիսի 16-ին Լիոնում:

Յիշեցնենք, որ Եւրոպայի լիգայի գործող յաղթողն է անգլիական «Մանչեսթեր Եունայթեդը», որն այս տարի հանդէս էր գալիս Ախոյեանների լիգայում եւ պայքարը լքեց 1/8 եզրափակիչում:

## Եուրա Մովսիսեանը Կարմիր Քարտ Է Ստացել



Եուրա Մովսիսեանի նորամուտը Շուեդիայի ֆուտբոլի բարձրագոյն լիգայում այնքան էլ յաջող չդասաւորուեց:

Շուեդական «Եուրգորդեն» տեղափոխուած հայ ֆուտպոլիստը մասնակցել է ԱԻԿ-ի հետ արտագնայ խաղին: Նա փոխարինման է մտել 76-րդ րոպէին, իսկ խաղի աւելացուած ժամանակի 3-րդ րոպէին Եուրա Մովսիսեանն անմիջական կարմիր քարտով հեռացուել է դաշտից:

Այդպիսով, Մովսիսեանը մեխանիկօրէն բաց կը թողնի Ապրիլի 18-ին նախատեսուած առաջնութեան յաջորդ հանդիպումը: Սակայն հնարաւոր է «Եուրգորդենը» բողոքարկի այդ կարմիր քարտը:

## Իբրաիիմովիչը Յաղթական Կոլ Խփեց MLS-ում



MLS-ի կանոնաւոր առաջնութեան 6-րդ տուրում «Լոս Անճելոս Գելաքսին» մրցակցի դաշտում նուազագոյն հաշուով յաղթեց «Չիկագո Ֆայրին»:

Հիւրերի յաղթական կոլն առաջին խաղակէսի վերջնամասում խփեց շուեդ յարձակուող Զլատան Իբրահիմովիչը, որն աչքի է ընկել Անգլիայի հաւաքականի նախկին պաշտպան Էշլի Քոուլի փոխանցումից յետոյ:

Անգլիական «Մանչեսթեր Եունայթեդից» «Լոս Անճելոս Գելաքսի» տեղափոխուած 36-ամեայ Իբրահիմովիչն առաջին անգամ հանդէս եկաւ ամերիկյան ակումբի մեկնարկային կազմում եւ երրորդ կոլը խփեց MLS-ում:

## Երեւանում Մեկնարկեց Սուսերամարտի Եւրոպայի Մ23 Տարեկանների Առաջնութիւնը

Երեւանում մեկնարկեց սուսերամարտի Եւրոպայի Մ23 տարեկանների առաջնութիւնը:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Մրցաշարին կը մասնակցի 31 երկրի մօտ 300 մարզիկ: Առաջնութիւնը կը կայանայ Երեւանի պետական համալսարանի Նորակառոյց մարզադահլիճում: Այս կարեւորագոյն ստուգատեսին Հայաստանը կը ներկայանայ 16 մարզիկով:

Հայ սուսերամարտիկները հանդես կը գան խոցասուսեր եւ ճկասուսեր մրցաձեւերում:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒՉՈՒԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, Կիրակի, 29 Ապրիլ 2018ին:

Սգակիրներ՝
Այրի Տիկին Ժոզէֆին Գուզուեան
Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարգրիտ Գուզուեան եւ զաւակները
Այրի Տիկին Ժիւլիէթ Աւագեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Նազարէթ եւ Մարինա Գույումճեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Մովսէս եւ Տալիտա Խաչատուրեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Ճորճ Գուզուեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Սարգիս Գուզուեան եւ զաւակները
Այրի Տիկ. Լիտիա Տէօքմէճեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Սիմոն եւ Լենա Սարգիս եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Յովսէփ Գուզուեան
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Գարոլին Սամուէլեան եւ դուստրը
Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Թալին Լապաչեան
Տէր եւ Տիկ. Եագուպ եւ Սիլվի Գուզուեան
Տէր եւ Տիկ. Միսաք եւ Թամար Հէքիմեան

Հոգեճաշ պիտի մատուցուի Raffi's Catering and Banquet սրահին մէջ,3887 E Sierra Madre Blvd, Pasadena, CA 91107:

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Յովհաննէս ԳՈՒՉՈՒԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Յարութիւն Գասճիքեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն եւ առ այդ $200 կը նուիրեն «Մասիս»ին:

## ANNOUNCEMENT

**State of California**
**Bureau of Real Estate**
**Notice to Judgment Debtor**
**(Consumer Recovery Account Claim)**
**RE 809 (Rev. 8/15) CONSUMER RECOVERY ACCOUNT UNIT**
**TO: ANDO HACOPIAN**
**Home Servers LLC**
**AVETIS AVETIKYAN aka AVIK AVETIKYAN**
**HACOPIAN FINANCIAL ENTERPRISES, INC. et al dba AAA**

**NOTICE: Based upon a judgment or criminal restitution order entered against you in favor of MARIAM GULOYAN, application for payment from the Consumer Recovery Account of the Real Estate Fund is being made to the Bureau of Real Estate.**

**If payment is made from the Consumer Recovery Account, all licenses and license rights that you have under the Real Estate Law will be automatically suspended on the date of payment and cannot be reinstated until the Consumer Recovery Account has been reimbursed for the amount paid plus interest at the prevailing rate.**

**If you wish to contest payment by the Real Estate Commissioner, you must file a written response to the application addressed to the Bureau of Real Estate at:**
**Bureau of Real Estate**
**Consumer Recovery Account Unit**
**P.O. Box 137007**
**Sacramento, CA 95813-7007**

**within 30 days after mailing, delivery, or publication of this notice, and mail or delivery of that response to the claimant. If you fail to do so, you will have waived your right to present your objections to payment.**




## ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 98-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Շարունակուած էջ 7-էն

եալ խաղերը ի վերջոյ յանգեցան ֆրանսական ուժերու Կիլիկիայէն հեռացման ու պատերազմի օրերուն իրենց դաշնակից հայութեան ուղղուած՝ Կիլիկիան պարպելու «խրատին», որովհետեւ մնալու պարագային, հայութիւնը կը գտնուէր Ցեղասպանութեան կրկնութեան վտանգին տակ...: Բանախօսութեան վերջին բաժինով, Մութաֆեան հպանցիկ ակնարկութիւն մըն ալ կատարեց 1939-ի այն իրադարձութեանց, որոնց հետեւանքով, Սուրիոյ ու Թուրքիոյ միջեւ սահմանագիծը, նախընթաց վերիվայրումներէն ետք, անգամ մը եւս փոփոխութեան ենթարկուեցաւ ի վնաս Սուրիոյ, երբ Ալեքսանտրէթի գօտին ֆրանսացիներու կամայականութեան ու հաշիւներուն պատճառով կցուեցաւ Թուրքիոյ: Սուրիացիք մինչեւ այսօր ալ չեն ընդունած այդ կորուստը:

Բանախօսութենէն ետք, տեղի ունեցաւ Այնթապի հերոսամարտին մասին Գէորգ Պապոյեանի գիրքին՝ անգլերէնի թարգմանուած նորատիպ հատորին ողջունահանդէսը: Թարգմանութիւնը կատարած է Թուրք այնթապցի բանասէր մը՝ Տոքթ Ումիթ Քուրթ: Մեկենասը՝ Մարք Ջէնեան, կարճ խօսքով մը ներկաները հրաւիրեց այս հատորը տարածելու նոր սերունդին ու ոչ հայերու մէջ, որպէսզի մեր պատմութեան մէկ փառաւոր էջը ճանաչում գտնէ: Հատորին բովանդակութեան մասին խօսեցաւ թարգմանողը: Ան նախ յստակ հայերէնով շնորհակալութեան խօսք ուղղեց իրեն տրուած առիթին համար, նաեւ՝ թարգմանական աշխատանքին աջակցողներուն, ապա, ամփոփ կերպով խօսեցաւ հերոսամարտի ընթացքին ու ելքին մասին, ինչպէս որ պատմուած է գիրքին մէջ:

Միութեան ատենապետը՝ Պրն. Աւետիս Տեմիրճեան հակիրճ խօսքով մը արձագանգ եղաւ հատորի տարածման կոչին: Տօնակատարութիւնը վերջ գտաւ վեր. Շահնազարեանի աղօթքով ու Այնթապի հերոսամարտի քայլերգին երգեցողութեամբ, զոր առաջնորդեց միութեան վարչութեան անդամներէն Յարութիւն Կարապետեան: Ներկաները վայելեցին կոկիկ հիւրասիրութիւն եւ գնեցին յիշեալ հատորէն օրինակներ: (Հատորէն օրինակներ ունենալու համար, կը խնդրուի վարչութեան անդամներուն կամ հեռաձայնել Տիկին Աստղիկ Խանճեանի, 626 355 3897 թիւով):

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Ա. Մ. ՄԻՈՒԹԵՆԷՆ

## «ԱՐԴԷՆ ՈՒՇ ԷՔ...»

Շարունակուած էջ 13-էն

թիւնը եւ անոր կարեւոր ներդրումը՝ տարածաշրջանի պատմութիւնը իր տարբեր դրուագներով կերտելու գիտակցութեան մէջ: Այս իմաստով, Մունային «արդէն ուշ էք»-ը առի որպէս երկկողմանի մարտահրաւէր-գիտակցութիւն: Գիտակցութիւնը Մունային՝ որպէս իսլամի: Ուշին ետին կան պատճառներ, որոնց ինք ու իր համայնքը նաեւ պէտք է գիտակցին, որ՝ մարդկային կեանքերը ու անոնց պատմութիւնները լաւապէս կը կերտուին գոյակցութեամբ եւ համակեցութեամբ: Բայց նաեւ՝ իմ գիտակցութիւնը, թէ տակաւին, որքա՜ն կարեւոր է քրիստոնեայ ներկայութիւնը եւ անոր առաքելութիւնը նոյնինքն մարդկային կեանքի պատմութիւնը եւ անոր դրուագները կերտելու եւ շինելու համար: Որքան անհրաժեշտ է գուրգուրալ մեր քրիստոնեայ աստուածաբանութեան եւ անոր բերած կարեւոր մեծ աւանդին մեր հաւաքական ու անհատական կեանքերուն համար:

«Ուշ ենք»՝այո՞...Եւ կան պատմական ու քաղաքական տուեալներ, որոնք կրնան ցոյց տալ, որ «արդէն ուշ ենք»:

Մարդկային կեանքի մեր պատմութեան մէջ գործադրուեցան շատ աւերներ, որոնք թերեւս կարելի էր կանխել...Ու տակաւին, մեր տարածաշրջանին մէջ կան ու եղան անկլինադարձային աղէտներ, որոնք ձգեցին հետքեր՝ շատ մը հաւաքականութիւններու վրայ: Արդէն «ուշ ենք» լսելու եւ ցանկալու, որ երանի այդ բոլորը տեղի չունենային...

«Արդէն ուշ ենք»...Երեւի...Թերեւս...Բայց ոչ երբեք ուշացած:

Քանի կայ պատմութեան կրկնուող յաջորդականութիւնը, որ աւերէն ետք պիտի գայ վերականգնումը, եւ քանդումէն ետք՝ շինարարութիւնը: Անհասկացողութիւններուն մէջէն կարելի է գտնել համերաշխութիւնը: Եւ անհանդուրժող հոգին կարելի է վերածել հանդուրժողականութեան: Մարդիկ Պահրէյնի մէջ վկայեցին իրենց հանդուրժողականութիւնը՝«մեզի համար հպարտութիւն է, որ դուք հոս էք»:

Եւ «հոս ենք», որովհետեւ կը հաւատանք, որ միասին կրնանք նորը շինել: Նորը, որ կրնայ ընդգրկել մարդկային կեանքեր՝ հիմնուած հանդուրժողականութեան վրայ, ուր «ուրիշ»-ը կը ճանչնաս եւ կրնաս ապրիլ անոր հետ՝ իր տարբերութիւններով:

Տարածաշրջանի ու, տակաւին, ընդհանրական այս բոլոր «թոհ ու բոհին» մէջէն եւ անկէ ետք պիտի կարենա՞նք տեսնել, որ պիտի կերտենք նորը: Հոն մարդիկ կրնա՞ն գիրար ընդունիլ:

«Արդէն ուշ էք», բայց անպայմանօրէն ուշացած չենք հաւատալու եւ գործելու, որ պիտի կերտենք նորը: Հոն, ուր մարդիկ կրնան գիրար ճանչնալ, բայց նաեւ ընդունիլ եւ, տակաւին, ապրիլ համերաշխութեամբ՝ իրենց տարբերութիւններով հանդերձ:

Խալէտը, Սալէհը, Մունան ու, տակաւին, Պահրէյնի փորձառութիւնը ցոյց տուաւ, որ...ուշ ենք, բայց...ուշացած չենք: Թէ՝ կարելի է տարբերութիւնները տեսնել, ընդունիլ ու նաեւ ապրիլ անոնց հետ:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net


ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ
ՔԱՅԼԱՐՇԱՒ
Ապրիլ 24
ԿԷՍՕՐՈՒԱՆ 12ին
Փան Փասիֆիք Փարքէն
7600 BEVERLY BLVD, LOS ANGELES
Թրքական Հիւպատոսարան
Հանրակարքերը պիտի մեկնին
առաւօտեան ժամը 11:30ին
ԿԼԵՆՏԷՅԼԷՆ
ՊԸՐՊԵՆՔԷՆ
ԼԱ ՔՐԵՍԷՆԹԱ/ԹԱՀԱՆԿԱԷՆ
ՓԱՍԱՏԻՆԱԷՆ
ՄՈՆԹԵՊԵԼԼՈԷՆ
ՀՈԼԻՎՈՒՏԷՆ
ՆՈՐԹ ՀՈԼՎՈՒՏԷՆ
ԷՆՍԻՆՈԷՆ
ՔԱՆՈԿԱ ՓԱՐՔ/ՎԱՆ ՆԱՅՁԷՆ
Փոխադրամիջոցներ Ապահովելու եւ
Յաւելեալ Տեղեկութիւններու համար
Հեռաձայնեցէք 888 924 1915 թիւին:
NALSA